

**<<ՀՀ Շիրակի Մարզի ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՐԱՁՈՐ ՆՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ
ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԵՎ
ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ>>
ԾՐԱԳՐԻ**

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՂԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ
(լրամշակված)**



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԱԽԱԲԱՆ	4
2. ՁԵՌՆԱՐԿՈՂԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՎ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ	4
3. ՀԻՄՆԱԴՐՈՒԹԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ.....	5
4. ՀԻՄՆԱԴՐՈՒԹԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ.....	5
4.1. Ելակետային նյութերի հավաքագրում	5
4.2. Իրավասու մարմիններից և կազմակերպություններից ստացված տեղեկատվություն	6
4.2.1. Ջրածոր նոր բնակավայրի համար հատկացված տարածքում պատմության և մշակույթի և բնության հուշարձանների, օգտակար հանածոների հանքավայրերի առկայություն	6
4.2.2. Նոր բնակավայրի ջրամատակարարման համար աղբյուրներից, կամ գոյություն ունեցող մայրուղային ջրագծին միանալու տեխնիկական պայմանների մասին տեղեկատվություն	6
4.2.3. Կոյուղու մաքրման կայանի /ԿՄԿ/ համար տեղի և ԿՄԿ-ում մաքրվող ջրերի հեռացման վայրի որոշում.....	7
4.2.4. Նոր բնակավայրը գոյություն ունեցող էլեկտրամատակարարման գծին միանալու տեխնիկական պայմաններ.....	7
4.2.5. Նոր բնակավայրը գոյություն ունեցող գազամատակարարման համակարգին միանալու տեխնիկական պայմաններ.....	7
4.2.6. Ջրածոր նոր բնակավայրի աղբահանության.....	8
4.2.7. Հակահրդեհային և շտապ բուժօգնության տեղադիրք և հասանելիություն	8
4.3. Ֆլորա	8
4.4. Ֆաունա	9
4.5. Բնակլիմայական պայմաններ	9
4.6. Տնտեսություն, զբոսաշրջություն, մշակույթ և ավանդույթներ, զարգացման ներուժ	20
4.7. Բնության հատուկ պահպանվող տարածքներ/ԲՀՊՏ-ներ/	26
4.8. Մթնոլորտային օդի և հողերի նկարագրության ելակետային իրավիճակ.....	27

5. ՀԻՄՆԱԴՐՈՒԹԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....	29
6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ	35
7. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ և ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....	36
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ.....	37
ՆԳՀ-Ի ՄՇԱԿՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ	38
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	39
Հավելված 1. 1-ին հանրային քննարկման հայտարարությունը, մասնակիցների ցանկը և արձանագրությունը	39
Հավելված 2. Ամասիայի համայնքապետարանի նախնական համաձայնության գրությունը	44
Հավելված 3. «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի տեխնիկական առաջադրանքը.....	45
Հավելված 4. Նոր Ջրածոր բնակավայրի կառուցապատման համար նախատեսվող տարածքի տեղադիրքը՝ WGS-84 (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով.....	68

1. ՆԱԽԱԲԱՆ

Սույն նախնական գնահատման հայտը մշակվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (այսուհետ՝ ՇՄԱԳՓ օրենք) ՀՀ օրենքի պահանջներին համաձայն: ՇՄԱԳՓ օրենքի 4-րդ հոդվածով սահմանվում են օրենքում օգտագործված հիմնական հասկացությունները: Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով հիմնադրության փաստաթուղթը՝ որպես հիմնական հասկացություն, սահմանված է որպես շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող փաստաթղթի (քաղաքականություն, ռազմավարություն, հայեցակարգ, ուրվագիծ, բնական ռեսուրսների օգտագործման սխեմա, ծրագիր, հատակագիծ, քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ) նախագիծ:

Վերոհիշյալ հիմնական հասկացության սահմանման իմաստով, «ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ջրածոր նոր բնակավայրի կառուցապատման համար անհրաժեշտ ծրագրային և նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթի պատրաստում» ծրագրային փաթեթը հանդիսանում է հիմնադրության փաստաթուղթ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման և փորձաքննության՝ 2 փուլով, նախնական և հիմնական:

Նախնական փորձաքննական փուլի մեկնարկման նպատակով, Ձեռնարկողի պատվերով մշակվել է հիմնադրության փաստաթղթի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը, որի վերաբերյալ ՇՄԱԳՓ օրենքի համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 2022թ-ի հուլիսի 21-ին ժամը 14:00-ին ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի խոշորացված համայնքում կազմակերպվել են 1-ին փուլի հանրային ծանուցում և քննարկումներ: Կատարված աշխատանքների և վերը ներկայացվածի հիման վրա Ձեռնարկողի պատվերով կազմվել է նախնական գնահատման հայտի փաթեթը՝ համաձայն ՇՄԱԳՓ օրենքի 16-րդ հոդվածի պահանջների, որը կներկայացվի ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն՝ փորձաքննական գործընթացը մեկնարկելու նպատակով:

2. ՁԵՌՆԱՐԿՈՂԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՎ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ

Նախատեսվող փորձաքննական գործընթացում, որի նախնական փուլի մեկնարկի նպատակով մշակվել և ներկայացվում է սույն նախնական գնահատման հայտը, որպես ձեռնարկող հանդես է գալիս «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամը, որի իրավաբանական հասցեն է ք. Երևան, Տերյան 105:

3. ՀԻՄՆԱԴՐՈՒԹԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՎ

ՆՊԱՏԱԿԸ

Հիմնադրության փաստաթղթի անվանումն է «ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ջրաձոր նոր բնակավայրի կառուցապատման համար անհրաժեշտ ծրագրային և նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթի պատրաստում» ծրագիր: Փաստաթղթի նպատակն է մշակել Ջրաձոր նոր բնակավայրի կառուցապատման համար անհրաժեշտ ծրագրային փաստաթղթերի փաթեթը, որի անհրաժեշտությունը պայմանավորված է Կապսի ջրամբարի կառուցմամբ Ջրաձոր հին բնակավայրի համար առաջացող հնարավոր ռիսկերով:

4. ՀԻՄՆԱԴՐՈՒԹԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

4.1. Ելակետային նյութերի հավաքագրում

Աշխատանքների իրականացման առաջին փուլում ուսումնասիրվել են հետևյալ ելակետային նյութերը.

1. Ամասիա համայնքի 2017-2021 թվականների զարգացման հնգամյա ծրագիր,

2. ՀՀ կառավարության 2020թ. օգոստոսի 27-ի N°1411 –Լ որոշում «Ջրային ռեսուրսների համատեղված կառավարում/Ախուրյան գետ, փուլ 1» ծրագրի շրջանակներում Հողերի ձեռքբերման և վերաբնակեցման գործողությունների պլանը հաստատելու մասին,

3. Ախուրյան գետի ջրային ռեսուրսների համապարփակ կառավարում (ՋՌՀԿ), Կապս ջրամբարի և ինքնահոս ոռոգման համակարգի կառուցում. Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման հիմնական հաշվետվություն վերջնական տարբերակ (BMZ ID 2014 67 950),

4. Ջրաձորի հողային հաշվեկշիռ (22 ձև),

5. Ջրաձոր նախկին համայնքի տարածքի 1:10000 մասշտաբի տեղագրական և կադաստրային հանույթներ,

6. Նոր բնակավայրի համար նախնական հատկացված տարածքի 1:1000 մասշտաբի տեղագրական հանույթ,

7. Ինչպես Կապսի ջրամբարի կառուցմանը, այնպես էլ Ջրաձոր գյուղին առնչվող տեղեկատվության ինտեռնետային ռեսուրսներ:

Ինչ վերաբերում է տարածքի ինժեներատեխնիկական շրջանացման և սեյսմիկ միկրոշրջանացման քարտեզներին և դրանց հետ կապված ուղեկցող փաստաթղթերին, դրանց ձեռքբերմանը նպատակահարմար է անդրադառնալ գյուղի տարածքի ընտրության վերաբերյալ վերջնական որոշում կայացնելուց հետո:

4.2. Իրավասու մարմիններից և կազմակերպություններից ստացված տեղեկատվություն

4.2.1. Ջրածոր նոր բնակավայրի համար հատկացված տարածքում պատմության և մշակույթի և բնության հուշարձանների, օգտակար հանածոների հանքավայրերի առկայություն

Համաձայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալի 13.04.2022թ. N°34//8110-2022 գրության, Ջրածոր նախկին համայնքի տարածքում գրանցված է երեք պատմամշակութային հուշարձան, ընդ որում, ցուցակի 1-ին համարի տակ ներառվել են ամրոցը և դամբարանադաշտը, իսկ 2-րդ և 3-րդ համարի տակ՝ եկեղեցին և գերեզմանոցը: Ըստ էության, խոսքը գնում է 5 հուշարձանի մասին (աղյուսակ 2):

Նույն գրության համաձայն, խնդրո առարկա տարածքում պատմամշակութային արժեք ներկայացնող նորահայտ հուշարձաններ հաշվառված չեն:

Գյուղի կառուցման համար նախնական հատկացված տարածքը, ըստ ՀՀ ՏԿԵ նախարարության Հանրապետական երկրաբանական ֆոնդի տնօրենի 08.04.2022թ. N°Ֆ-167/22 գրության, ծանրաբեռնված չէ ընդերքօգտագործման իրավունքով և տեղամասում օգտակար հանածոների, այդ թվում նաև ստորերկրյա ջրերի հաստատված պաշարներ առկա չեն:

4.2.2. Նոր բնակավայրի ջրամատակարարման համար աղբյուրներից, կամ գոյություն ունեցող մայրուղային ջրագծին միանալու տեխնիկական պայմանների մասին տեղեկատվություն

Տեղեկատվությունը ճշտգրտման փուլում է: Խնդրո առնչությամբ, ի պատասխան ՃՇՀԱՀ ռեկտորի 02.03.2022թ. N°01-13-01//02-02 գրության, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ գլխավոր տնօրենի 15.03.2022թ. N°ՄԾ/5660 պատասխան գրությամբ առաջարկվել է Ընկերությանը ներկայացնել Ջրածորի կադաստրային քարտեզը՝ կադաստրային ծածկագրերի նշումներով:

4.2.3.Կոյուղու մաքրման կայանի /ԿՄԿ/ համար տեղի և ԿՄԿ-ում մաքրվող ջրերի հեռացման վայրի որոշում

Նշված խնդիրը կարող է կարգավորվել բնակավայրի կառուցման տարածքի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելուց հետո՝ գլխավոր հատակագծի մշակման շրջանակներում:

4.2.4.Նոր բնակավայրը գոյություն ունեցող էլեկտրամատակարարման գծին միանալու տեխնիկական պայմաններ

ՀԷՑ-ի տնօրենի 29.03.2022թ. N^oԴԳ1350 գրության համաձայն, Ջրածոր գյուղի էլեկտրամատակարարումը կարող է իրականացվել «Ամասիա» 110/35/10 կվ ենթակայանի «Ցողամարգ» 10կվ օդային գծից ճյուղավորումով կամ «Վահրամաբերդ» 110/35/10 կվ ենթակայանի «Վանք» 10կվ օդային գծից ճյուղավորումով՝ ելնելով էլ. Մատակարարման նվազագույն ծախսումներով իրականացման պայմանից:

4.2.5. Նոր բնակավայրը գոյություն ունեցող գազամատակարարման համակարգին միանալու տեխնիկական պայմաններ

Ջրածոր գյուղի գազամատակարարման տեխնիկական պայմանները ներկայացված են Գազպրոմ Արմենիա ՓԲԸ գլխավոր տնօրենի տեղակալի 18.03.2022թ. N^o02/17.1/737-2022 գրությանը կից, համաձայն որի.

- միացման տեղում գազի աշխատանքային ճնշումը կազմելու է $P_{աշխ.փաստ.}=1.0-1.7$ ՄՊա
- գազատարի տրամագիծը պետք է լինի 219X7.0մմ
- Միացման տեղը ըստ նախագծի- ԳԲԿ Գյումրի-1 սնող D_պ-200 կողմնատար-գազատարի 0.15 կմ-ից
- Շիրակի ԳԳՄ տնօրենի 17.03.2022 թ. Տեխնիկական պայմաններին համապատասխան՝
 1. Գազի ժամային 400 մ³ ծախսով հնարավոր է միացնել Ամասիա համայնքը սնող մ/ճ ս/գ գազատարից
 2. Գոյություն ունեցող գազատար. Գործող ստորգետնյա d=273 մմ գազատարից
 3. Միացվող գազատարուժմ գազի ճնշումը միջին, 1.2-1.8 կգ/սմ²
 4. Միացման կետ Ամասիա գյուղի մոտից
 5. Լրացուցիչ պահանջներ միցման կետի հեռավորությունը 7 կմ
 6. ներկայացված է գազաֆիկացման գծապատկեր:

4.2.6. Ջրածոր նոր բնակավայրի աղբահանության համակարգի խնդրին հնարավոր է անդրադառնալ գյուղի վերաբնակեցման տարածքի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելուց հետո:

4.2.7. Հակահրդեհային և շտապ բուժօգնության տեղադիրք և հասանելիություն

Քանի որ ինչպես հակահրդեհային, այնպես էլ շտապ բուժօգնության ծառայությունները տեղաբաշխված են Ամասիայում, դրանց հասանելիության հարցին կարելի է անդրադառնալ գյուղի վերաբնակեցման տարածքի վերջնական ճշգրտումից, ինչպես նաև Կապսի ջրամբարի կառուցման արդյունքում ճանապարհատրանսպորտային ցանցի հնարավոր փոփոխությունների վերաբերյալ նախագծային առաջարկություններից հետո:

4.3. Ֆլորա

Հիմնադրությամբ փաստաթղթով նախատեսվող վայրը գտնվում է Վերին Ախուրյանի և Շիրակի ֆլորիստիկ շրջաններում: Դրանք բավականին տարբեր են իրենց բուսական աշխարհով և բուսականությամբ և պատկանում են տարբեր ֆլորիստիկ շրջանների: Վերին Ախուրյանի ֆլորիստիկ շրջանը պատկանում է Կովկասյան տարածաշրջանին, իսկ Շիրակի ֆլորիստիկ շրջանը՝ հայ-իրանական տարածաշրջանին: Տարածքը մոտ է տեղակայված Ախուրյան գետի կիրճին, որն իրենից ներկայացնում է քիչ թե շատ նեղ ձոր՝ շրջապատված թեք լանջերով, իսկ ստորին հատվածը հարթավայրային է: Բուսականությունն ընդգրկում է տիպիկ պետրոֆիլային էկոհամակարգեր, տափաստաններ և մարգագետնատափաստանային համակեցություններ, հիմնականում ուռենու, երբեմն բարդու փոքր պուրակներ: Հանդիպում են նաև տրագականտային և տափաստանային թփուտներ: Պետք է նշել, որ տափաստանային և մարգագետնատափաստանային համակեցությունները հիմնականում գտնվում են հարթավայրային հատվածներում և հիմնականում շատ խախտված են արածեցման և գերարածեցման պատճառով: Թեք լանջերին հանդիպող բուսականությունը գտնվում է բավականին լավ վիճակում: Նախնական գնահատման փուլի շրջանակներում գրականական տվյալների ուսումնասիրության և վերլուծության արդյունքներով նախագծման տարածքում Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների առկայություն չի հաստատվել: Հիմնական գնահատման փուլի շրջանակներում ըստ անհրաժեշտության կիրականացվեն լրացուցիչ ուսումնասիրության և վերլուծական աշխատանքներ:

4.4. Ֆաունա


Ֆաունիստիկ տվյալները հիմնականում վերցված են օգտագործված գրականական և ծրագրին առնչվող բաց, հասանելի այլ հաշվետվություններից: Համաձայն հիշատակված ելակետային փաստաթղթերի, տարածքում հանդիպում են հիմնականում Ախուրյան գետի Կապսի ապագա ջրամբարի ջրատարերին ու հարակից տարածքներին բնորոշ կենդանատեսակները: Ֆաունայի տեսակային կազմի մասին տեղեկատվություն հավաքագրելու նպատակով օգտագործվել են ինչպես գրականությունից վերցված տեղեկատվական տվյալները, այնպես էլ դաշտային հետազոտությունների ընթացքում հավաքագրված նյութերը: ՀՀ-ում տպագրված հասանելի նյութերի վերանայման ընթացքում ակնհայտ դարձավ, որ հնարավոր չէ ստեղծել առաջարկվող հետազոտման վայրերում բնակվող կենդանատեսակների (կաթնասուններ, թռչուններ, սողուններ և երկկենցաղներ) ստուգաթերթիկ: Բոլոր առկա տվյալները մասնատված էին և չէին արտացոլում իրականությունը, քանի որ դրանք չեն սահմանում տվյալ տարածքում բնակվող որևէ ցեղատեսակի առկայություն: Վերը նշվածի հիման վրա պատրաստվել է ողնաշարավոր այն տեսակների նախնական ցանկը, որոնք ենթադրաբար հանդիպում են տվյալ տարածքում: Նախնական գնահատման փուլի շրջանակներում գրականական տվյալների ուսումնասիրության և վերլուծության արդյունքներով նախագծման տարածքում Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակների առկայություն չի հաստատվել: Հիմնական գնահատման փուլի շրջանակներում ըստ անհրաժեշտության կիրականացվեն լրացուցիչ ուսումնասիրության և վերլուծական աշխատանքներ:

4.5. Բնակլիմայական պայմաններ

Կլիմա

Տարածաշրջանում կլիման չափավոր ցուրտ է՝ կարճատև զով ամառներով և երկարատև ցուրտ ձմեռներով: Կայուն ձնածածակույթը երկար է պահպանվում, ինչի պատճառով գարունն այստեղ սկսվում է միայն ապրիլի երկրորդ տասնօրյակից: Ամառը զով է ու կարճ: 15°C-ից բարձր օրական միջին ջերմաստիճանները դիտարկվում են մայիսի կեսերից մինչև հոկտեմբերի կեսերի միջակայքում, ամենատաք՝ 20-25°C միջին ջերմաստիճանը՝ հունիսի կեսերից մինչև սեպտեմբերի կեսերը (Գծապատկեր 1): Միաժամանակ, բարեխառն տաք՝ (10°C-ից բարձր) օրական միջին ջերմաստիճանները դիտարկվում են ապրիլի վերջից մինչև հոկտեմբեր վերջը:

Գծապատկեր 1. Տարեկան միջին ջերմաստիճանները և տեղումները Ջրածորի տարածքում



Առավել ցուրտ ամիսներն են հունվարը, փետրվարը և դեկտեմբերը՝ միջինը -14°C -ից մինչև -11°C, նույն ամիսներին բացարձակ նվազագույն ջերմաստիճանը կարող է հասնել -21°C -18°C-ի:

Արդեն նոյեմբերի առաջին օրերին առաջանում է ձնածածկույթ, որը վերանում է միայն ապրիլի երրորդ տասնօրյակում: Ձնածածկույթի առավելագույն միջին տասնօրյակային հաստությունը կազմում է մոտ 60սմ, իսկ բացարձակ առավելագույնը՝ մոտ 140սմ:

Մթնոլորտային տեղումների առավելագույն քանակները դիտարկվում են ապրիլ-մայիս ամիսներին՝ անցնելով 100մմ-ից (Աղյուսակ 1), նվազագույնը՝ օգոստոս-սեպտեմբեր ամիսներին: Ձմռանը հաճախակի են մառախուղները: Տարվա ընթացքում տեղումների քանակը կազմում է 600-700մմ:


Աղյուսակ 1. Տեղումների միջինացված տվյալները Ջրածորում

Հունվար	42 մմ	Հուլիս	41 մմ
Փետրվար	51 մմ	Օգոստոս	31 մմ
Մարտ	70 մմ	Սեպտեմբեր	38 մմ
Ապրիլ	98 մմ	Հոտեմբեր	58 մմ
Մայիս	107 մմ	Նոյեմբեր	50 մմ
Հունիս	73 մմ	Դեկտեմբեր	43 մմ

Տարածաշրջանում քամիների գերակշռող ուղղություններն են հարավ-հարավարևմտյան, հարավային և արևելք-հյուսիսարևելյան ուղղությունները


(Գծապատկեր 2), ընդ որում այդ ուղղություններում քամիների գերակշռող ուժգնությունը տատանվում է 5.3-7.7մ/վրկ միջակայքում:

Գծապատկեր 2. Քամիների գերակշռող ուղղությունները (քամիների վարդ)



Համեմատաբար ուժեղ և տևական քամիները 5.4-7.8մ/վրկ, դիտարկվում են հունվար, փետրվար և դեկտեմբեր ամիսներին, իսկ ամեաուժգին և տևական քամիները՝ ավելի քան 7.9 մ/վրկ արագությամբ, դիտարկվում են ապրիլ, մարտ և հունվար ամիսներին (Գծապատկեր 3): Համեմատաբար թույլ քամիները՝ մինչև 1.3մ/վրկ արագությամբ, ամենատևականն են հունիսին և սեպտեմբերին, իսկ մինչև 3.3մ/վրկ քամիներն ամենատևականն են գրեթե բոլոր ամիսներին:

Գծապատկեր 3.Քամիների ուժգնություն



«Ամասիա» օդերևութաբանական կայանի տվյալները՝ համաձայն «Շինարարական կլիմայաբանություն ՀՀՇՆ II-7.01-2011» (http://www.mud.am/lows/files/26_10_11_h.pdf) նորմատիվային փաստաթղթի

Աղյուսակ 2. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը

Օդերևութաբանական կայան	Օդերևութաբանական կայանի բարձրությունը, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C0												Միջին տարե-կան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Ամասիա	1849	-8.9	-7.3	-3.4	3.6	9.0	12.4	15.8	16.0	12.4	6.9	0.6	-5.8	4.3	-31	33

Աղյուսակ 3. Օդի հարաբերական խոնավությունը

	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական Ժ. 15-ին	
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		հունվարին	օգոստոսին
Ամասիա	1849	80	79	76	70	68	67	63	61	60	68	80	80	71	72	45

Աղյուսակ 4.. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Օդերևութաբանական կայան	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Ձնածածկույթ, մմ			
	Ըստ ամիսների												տարեկան	Առավելագույն տասնօրյակային ձնածածկույթը	Տարվա ձնածածկույթի օրերը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12				
Ամասիա	42	48	46	70	106	91	54	42	36	47	44	44	670	146	132	307
	28	49	30	42	49	51	53	38	37	38	45	51				

Աղյուսակ 5. Քամու պարամետրերը

1	2	3	Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/վրկ ըստ ուղղությունների								12	13	14	15	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "ո" տարիների ընթացքում		
			4	5	6	7	8	9	10	11					16	17	18
Ամասիա	811.0	Հունվար	43	5	9	2	17	6	12	6	71	1,3	2,2	70	24	26	28
			3,1	2,7	3,0	1,9	1,9	3,0	2,7	1,9							
		Ապրիլ	37	7	12	3	18	4	13	6	46	2,3					
			3,4	3,4	3,5	2,6	2,3	2,1	2,7	2,0							
		Հուլիս	42	21	24	1	4	1	4	3	28	3,6					
			3,5	3,8	3,4	3,0	1,9	2,6	2,3	2,1							
		Հոկտեմբեր	38	6	16	2	20	4	10	4	61	1,6					
			3,1	3,1	3,6	3,0	1,8	2,5	2,4	1,9							

Ռեզիւմե


Ջրածոր նոր բնակավայրի կառուցապատման համար Ամասիա համայնքի որոշմամբ նախնական հատկացված տարածք գտնվում է Ախուրյան գետի Հողմաջուր վտակի ձախափնյա հատվածում և ներառում է ընդհանուր առմամբ 37,9 հա հողատարածք, որը բաժանված է երկու հատվածի՝ հյուսիսային մասում՝ 27,3 հա և հարավային մասում՝ 10,6 հա մակերեսներով (Քարտեզ 1):

Ընտրված տարածքի հյուսիս-արևմտյան սահմանին մոտ անցնում է Հ-32 հանրապետական նշանակության Մ-1-Գյումրի- Կապս-Ամասիա-Մ-1 ավտոճանապարհը, որի ծրագիծը Կապսի ջրամբարի կառուցման հետևանքով պետք է որոշակի փոփոխությունների ենթարկվի:

Առաջին հատվածի սահմաններում տարածքի հարավ-արևելյան եզրին գտնվող ամենաբարձր նիշի բացարձակ բարձրությունը կազմում է 1883,5մ, ամենացածրը՝ հյուսիս-արևմտյան եզրին, կազմում է 1761,5 մ [2]: Այսպիսով, առաջին տարածքի ուղղաձիգ նիշերի տարբերությունը (նիշերի անկումը) կազմում է 122 մ: Վերին և ստորին նիշերի միջև հեռավորությունը (հորիզոնական պրոյեկցիա)՝ 789,5 մ է, իսկ միջինացված թեքությունը՝ $i=0,154$ կամ 15,4%: Տարածքի տարբեր մասերում կան տարբեր կողմնադրություն (հիմնականում հյուսիսային և հյուսիս-արևմտյան, որոշ չափով նաև արևմտյան և հարավ արևմտյան) և տարբեր թեքություններ ունեցող հատվածներ:

Երկրորդ՝ 10,6 հա հատվածի տեղագրական նիշերն են՝ 1866,0 մ ծ.մ և 1762,5 մ ծ.մ, անկումը կազմում է 103,5 մ, իսկ ընդհանուր միջինացված ձգվածությունը Հյւ-Աե 690,5մ, իսկ թեքությունը՝ $i=0,14$ կամ 14,9%:

Քարտեզ 1. Իրադրության սխեմա (Ջրածոր գյուղի կառուցման համար հատկացված տարածքը)




Տեխնիկական առաջադրանքին համապատասխան՝ բնակելի և այլ նշանակության կառուցապատման համար նախատեսված տարածքների հաշվարկը, համաձայն քաղաքաշինական նորմերի, չի գերազանցում 16 հեկտարը: Ուստի, նոր բնակավայրի տեղաբաշխման համար տարածքի ընտրության ժամանակ բացառվել են երկրորդ՝ հարավային հատվածը, ինչպես նաև առաջին հատվածի հարավ արևելյան մասում գտնվող լանջերի թեքությունների թույլատրելի նորմերը շոշափելիորեն գերազանցող տարածքը:

Արդյունքում՝ ռելիեֆի ավելի մանրամասն ուսումնասիրության համար առանձնացվել է առաջին հատվածի հյուսիսարևելյան մասը՝ 19.02 հա ընդհանուր մակերեսով (Քարտեզ 2):

Հարկ է նշել, որ չնայած ընտրված տարածքը հարաբերականորեն ավելի փոքր թեքություններ ունի մնացած տարածքների համեմատությամբ, այսուհանդերձ, այս հատվածում ևս կան թույլատրելի թեքությունները գերազանցող առանձին հատվածներ:


Գրաֆիկական եղանակով տարածքի վերլուծությունը եվ գնահատումը բացահայտում է տարածքում առկա լանջերի տարբեր թեքություն ունեցող 10 հատվածներ (Քարտեզ 3), որոնք դասակարգվել են երեք հիմնական խմբի՝ ըստ քաղաքաշինական և կառուցապատման նպատակներով օգտագործելու բարենպաստության աստիճանի:

Քարտեզ 2. Նոր բնակավայրի տեղաբաշխման համար ընտրված տարածքը



Առաջին խմբում (1-5-րդ հատվածներ) ընդգրկվել են կառուցապատման համար խիստ անբարենպաստ տարածքները՝ լանջերի 18-31% թեքություններով, 2.74 հա ընդհանուր մակերեսով, որը կազմում է կառուցապատման համար ընտրված տարածքի 14.4%-ը:

Քարտեզ 3. Տարածքի վերլուծությունը ըստ թեքությունների և կողմնադրությունների



Երկրորդ խմբում (6-7-րդ հատվածներ) ընդգրկվել են կառուցապատման համար սահմանափակ բարենպաստության աստիճան ունեցող տարածքները՝ լանջերի 13-15% թեքություններով, 4.80 հա ընդհանուր մակերեսով, որը կազմում է կառուցապատման համար ընտրված տարածքի 25.2 %-ը:

Երրորդ խմբում (8-10-րդ հատվածներ) ընդգրկվել են կառուցապատման համար հարաբերականորեն բարենպաստ տարածքները՝ լանջերի մինչև 10% թեքություններով, 11.48 հա ընդհանուր մակերեսով, որը կազմում է կառուցապատման համար ընտրված տարածքի 60.4%-ը:

Այսպիսով, ընդհանրացնելով տարածքի լանջերի թեքությունների նկարագիրը, կարելի է եզրակացնել, որ ընտրված տարածքում գործնականում բացակայում են կառուցապատման համար լիարժեքորեն բարենպաստ տարածքներ, իսկ սահմանափակ բարենպաստ և հարաբերականորեն բարենպաստ տարածքները ենթադրում են հողային աշխատանքների և հենապատերի մեծ ծավալներ և փողոցային ցանցի՝ առանձին հատվածներում սահմանային թույլատրելի թեքություններ:

Բացի այդ, տարածքի գերակշիռ հատվածներն ունեն հյուսիսային, հյուսիսարևմտյան և արևմտյան կողմնադրություն (օրիենտացիա), ինչը, հաշվի առնելով տարածաշրջանի կլիմայական պայմանները, որոշակիորեն սահմանափակում է


կառուցապատման արդյունավետ լուծումներ առաջարկելու և բարենպաստ կենսամիջավայր ձևավորելու հնարավորությունները:

Թվարկված նկատառումներն ավելի հիմնավորվեցին ՃՇՀԱՀ և «Հայնախագիծ» ԲԲԸ մանագետների կողմից նոր գյուղի գլխավոր հատակագծի էսքիզային տարբերակների մշակման ժամանակ: Տարբերակները քննարկվել են ինչպես ՃՇՀԱՀ-ում և «Հայնախագիծ» ԲԲԸ-ում, այնպես էլ պատվիրատուի և շահագրգիռ այլ կողմերի ներկայացուցիչների մասնակցությամբ: Քննարկումների ժամանակ ներկայացվել են մասնագետների մտահոգությունները՝ ընտրված տարածքի հատկապես մեծ թեքությունների և անբարենպաստ կողմնադրության, ինչպես նաև տեղադիրքի առումով:

Հաշվի առնելով վերը շարադրվածը, մասնագետները, ուսումնասիրելով նախկին Ջրածոր համայնքի վարչական տարածքի տեղագրական և կադաստրային հանույթները, առաջարկել են գյուղի կառուցման նոր տարածք, որը գտնվում է ներկայիս գյուղը Հողմիկ գյուղին կապող ճանապարհին հարող հատվածում (քարտեզ 4)՝ Ջրածորից 5-6 հարյուր մետր հեռավորության վրա:

Առաջարկվող տարածքն ունի հարավային կողմնադրություն, լանջերի անհամեմատ մեղմ թեքություններ և կենտրոնական դիրք՝ համայնքային և սեփականաշնորհված հողերի նկատմամբ: Բացի այդ, նշված տարածքում ինչպես անհրաժեշտ ենթակառուցվածքների ձևավորումը, այնպես էլ շինարարությունն ու շահագործումը անհամեմատ փոքր ներդրումներ կպահանջեն:

Քարտեզ 4. Զրաձոր գյուղի կառուցման համար Ամասիա համայնքի կողմից նախնական հարկացված և կապալառուի մասնագետների կողմից առաջարկվող փարածքներ (մանուշակագույն գծապարված)




Առաջարկության հիմնավորումները՝ համայնքի կողմից նախնական հատկացված և մասնագետների կողմից առաջարկվող տարածքների համեմատական գնահատականներով, ՃՇՀԱՀ ռեկտորի N°01-13-01/13-02 առ 13.04.2022թ. գրությամբ ներկայացվել են Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենին:

Լանդշաֆտ, հողի ծածկույթ, բուսականություն, շրջակա միջավայր

2019թ. մայիսին Կապսի ջրամբարի տարածաշրջանի լանդշաֆտը բնութագրելու համար իրականացվել է դաշտային ուսումնասիրություն: Արդյունքում Կապսի ջրամբարի տարածքում հայտնաբերվել են 4 տիպի անտրոպոգեն լանդշաֆտներ և չորս տիպի բնական լանդշաֆտներ, որոնք ազդեցության են ենթարկվելու Կապսի պատվարի և ջրամբարի կառուցման և շահագործման արդյունքում: Նմանատիպ լանդշաֆտներ կարող են հայտնվել առանձին, միմյանց ոչ սահմանակից վայրերում: Անտրոպոգեն լանդշաֆտներն ընդգրկում են բնակավայրերը, գյուղատնտեսական հողերը, անտառային լանդշաֆտները և դեգրադացված լանդշաֆտները: Բնական լանդշաֆտներն են խոնավ տարածքների լանդշաֆտները, լեռնատափաստանային լանդշաֆտները, գետահովտային լանդշաֆտները և Ախուրյանի կիրճի լանդշաֆտը (Քարտեզ 5):

Ուսումնասիրությունները ցույց են տվել, ապագա ջրամբարի տարածքի բնական հողերը գտնվում են հիմնականում տափաստանային գոտում [3]: Այս տարածքում գերակշռում են տիպիկ լեռնային թույլ կրաքարային սևահողերը: Մասնավորապես 2018թ. իրականացված ապագա ջրամբարի տարածքում գտնվող հողերի ուսումնասիրությունը դրանք նկարագրում է որպես լեռնային սևահողեր, որոնք ունեն մանրախճային կազմ և բարձր բերքատվություն:

Քարտեզ 5. Տարածաշրջանի լանդշաֆտները



4.6.Տնտեսություն, զբոսաշրջություն, մշակույթ և ավանդույթներ, զարգացման ներուժ

Ընդհանուր նկարագրություն

Նախկին Ջրածոր համայնքի հողային հաշվեկշռի համաձայն, համայնքի վարչական տարածքը կազմել է 1152.3 հեկտար, որի մեջ ամենամեծ ծավալները գյուղատնտեսական հողերին են՝ 935.93 հա (Գծապատկեր 4): Հարկ է նշել, որ հաշվեկշռում հատուկ նշանակության և պահուստի հողեր չկան: Գյուղատնտեսական հողերից 348.40 եկտարը վարելահողեր են, 527.23 հեկտարը՝ արոտավայրեր և 60.30 հեկտարը՝ այլ հողատեսքեր:

Գյուղում առկա են 2 գերեցմանոց, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 1. 44 հա:

Ներկայացվող նախագծային լուծումներից հետո հեռավորությունը աղբավայրերից մինչև բնակելի տարածք կկազմի համապատասխանաբար 994 և 1121.5 մ: Ըստ գործող օրենսդրության սանիտարական պաշտպանիչ գոտին պետք լինի առնվազն 300 մ:


Գյուղում ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներ չկան:

Նոր բնակավայրում նախատեսված է հիմնել 0.41 հա ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներ: Կանաչապատման մանրամասն ծրագիրը կներկայացվի ռազմավարական գնահատման հաշվետվությունում:

Նախկին Ջրածոր բնակավայրում ակտիվ սողանքային երևույթներ չկան: Սակայն, համաձայն Կապսի ջրամբարի կառուցման ծրագրի շրջանակներում իրականացված ուսումնասիրությունների արդյունքների, ջրամբարի կառուցումից և

հետագա շահագործումից հետո սողանքային երևույթների ակտիվացման ռիսկերը գնահատվել են իրատեսական, որով և պայմանավորված խնդիր է դրվել նախագծել և կառուցել Ջրածոր նոր բնակավայրը և նախաձեռնել հին Ջրածոր գյուղի վերաբնակեցման գործընթաց: Համաձայն վերոհիշյալ ծրագրի շրջանակներում իրականացված հետազոտությունների, Ջրածորի նոր բնակավայրի համար նախատեսված տեղանքում սողանքային երևույթներ չկան:

Գծապատկեր 4. Ջրածորի հողերի բաշխումն ըստ նպատակային նշանակության (2016թ)




Հողերի բաշխումն ըստ սեփականության իրավունքի սուբյեկտների ներկայացված է 5-րդ գծապատկերում, ինչից ակնհայտ է, որ տարածքի մեծ մասը համայնքային սեփականության հողերն են՝ 58 տոկոս կամ 656.6 հա, որից 498.4 հեկտարը արոտներ են, 79.5 հեկտարը՝ վարելահողեր և 60.3 հեկտարը՝ այլ հողատեսքեր:

Պետական սեփականության հողերը կազմում են 178.2 հեկտար, որոնց մեծ մասը կազմում են հատուկ պահպանվող տարածքների, անտառային ու ջրային ֆոնդի հողեր:

Քաղաքացիների սեփականության հողերը կազմում են 300.6 հա, որից 268.9 հեկտարը վարելահողեր են, 12.8 հեկտարը՝ արոտներ:

Հարկ է անդրադառնալ քաղաքացիների սեփականության հողերի տարածքային բաշխվածության և մասնատվածության հիմնախնդրին:

Գծապատկեր 5. Ջրածորի հողերի բաշխումն ըստ սեփականության իրավունքի սուբյեկտների



Ինչպես Ամասիա համայնքի 2017-2021 թվականների զարգացման հնգամյա ծրագրի 4-րդ աղյուսակում ներկայացված թվերը, այնպես էլ Ջրածոր նախկին համայնքի կադաստրային հանույթի (Քարտեզ 6) ուսումնասիրությունները ցույց են տալից, որ գյուղի յուրաքանչյուր տնտեսությանը հողերի սեփականաշնորհման ժամանակ բաժին հասած՝ միջին հաշվով 5.5հա հողատարածքը տրոհված է 10-11 հողամասերի միջև, որոնք տեղաբաշխված են տարբեր հատվածներում:

Ակնհայտ է, որ հողերի մասնատվածության նման պատկերը ոչ միայն թույլ չի տա քաղաքացիներին՝ մշակելու բոլոր հողամասերը, այլև լուրջ խոչընդոտ կհանդիսանա գյուղատնտեսական արդյունավետ արտադրություն կազմակերպելուն:

Հետևաբար, կարելի առաջարկություն ներկայացնել ՏԿԵ նախարարությանը՝ քննարկման առարկա դարձնել Ջրածորում գյուղատնտեսական հողերի կոնսոլիդացիայի ծրագիր մշակելու և իրականացնելու հարցը, իհարկե, առանձին ծրագրի շրջանակներում:

Գյուղատնտեսության հիմնական ճյուղ է համարվում հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությունը:

Ոռոգման ջրի, բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանների /երաշտ, կարկտահարություն, ցրտահարություն և այլն/ և հակակարկտային կայանների բացակայության պատճառով համայնքի գյուղացիական տնտեսությունները լուրջ դժվարությունների առաջ են կանգնած գյուղատնտեսական մթերքների կայուն արտադրություն կազմակերպելու և բարձր բերքատվություն ապահովելու համար: Արտադրական ձեռնարկություններ չկան: Մրգերի և բանջարեղենի արտադրությունը քիչ է, և հիմնականում չի վաճառվում, այլ սպառվում է համայնքի բնակչության կողմից: Գյուղատնտեսության առավել զարգացած ճյուղ դիտարկվում

է անասնապահությունը, որը նաև հանդիսանում բնակչության հիմնական զբաղմունքներից մեկը: Տարածաշրջանում հնարավոր է զարգացնել նաև մեղվաբուծությունը:

Տարածքի ջրային ռեսուրսները և հիդրոերկրաբանական պայմանները

Տարածաշրջանի հիմնական ջրային ռեսուրսը Ախուրյան գետն է: Ախուրյան գետը սկիզբ է առնում Հարավային Կովկասի լեռների հայաստանյան հատվածից՝ Ջավախք-Շիրակ սարահարթում, նախ Արփի լճից (ծովի մակարդակից 2,025 մ բարձրության վրա) հոսում է դեպի արևելք, այնուհետև հարավ՝ դեպի Կապսի պատվարը: Կապսի պատվարից Ախուրյան գետը Շիրակի մարզի սահմաններում շարունակվում է դեպի հարավ՝ մինչ Հայաստանի և Թուրքիայի սահմանի միջև ընկած Ախուրյանի ջրամբար: Ախուրյան գետը Արաքս գետի հիմնական ձախակողմյան վտակն է, և թափվում է Արաքսի գետաբերանից 708 կմ հեռավորության վրա: Ջրահավաք ավազանը կազմում է 9670 կմ² տարածք, գետի երկարությունը 186 կմ է: Ախուրյան գետը պատկանում է լեռնային գետերի շարքին, որը ստանում է խառը սնուցում, հիմնական սնուցման աղբյուրը ձյան հալոցքից ստացվող ջուրն է: Ստորերկրյա և անձրևաջրերը նույնպես կարևոր դեր են խաղում գետի սնուցման համար: Գետի ջրի ռեժիմը բնութագրվում է հետևյալ փուլերով՝ գարնանային վարարումներ, որոնք տեղի են ունենում նաև ամռան ամիսներին, անձրևային հեղեղումներ, ջրի ցածր մակարդակ ամռանը, ամռան-աշնան ամիսներին և ձմռանը: Ախուրյան գետի ջրի որակը ուսումնասիրվել է հիմք ընդունելով Արագ կենսաբանական գնահատումը (մակրոզոոբենթոս), ինչպես նաև ջրի քիմիական միջոցառումների եռամսյակային վերլուծությունը: Այս երկու մոտեցումներով էլ Ախուրյան գետի վերին հոսանքների ջրի որակը գնահատվել է որպես լավ, իսկ ստորին հոսքում՝ որպես վատ կամ միջին՝ պայմանավորված Գյումրի քաղաքում կոմունալ-կենցաղային կեղտաջրերի արտահոսքով: Դա, ընդհանուր առմամբ, համահունչ է Ախուրյան գետի ավազանի կառավարման պլանի (ԳԿՊ) եզրակացություններին՝ ջրի որակի վերաբերյալ:


Ջրածոր գյուղի մերձակայքում նախատեսվում է կառուցել Կապսի ջրամբարը: Տեղանքում այլ ջրամբարներ, ՀԷԿ-եր, հիդրոտեխնիկական կառույցներ չկան:

Ուսումնասիրվող տարածքում ստորգետնյա ջրերը տեղադրված են խորը հորիզոններում: Գրունտային ջրերի համատարած հորիզոն ևս բացակայում է: Սակայն տարածքի մի հատվածում գրունտային ջրերի մակարդակ ֆիքսվել է երկու հորատանցքում՝ թիվ 11 և 7: Ընդ որում, հորատման ժամանակ ջրերը բացահայտվել են միայն հորատանցք 11-ում, 2.3 մ խորության վրա, իսկ 7-ում դրանք հայտնվել են փորելուց հետո, ֆիքսվել միայն հաջորդ օրը 2.8 մ խորության վրա: Վերջին չափումների ժամանակ գրունտային ջրի խորությունը եղել է՝ հոր. 11-ում՝ 2.2 մ, հոր. 7-ում՝ 2.8 մ:

Գրունտային ջրերի սահմանափակ տարածումը պայմանավորված է տարածքի գեոմորֆոլոգիական /ռելիեֆի, գրունտային կառուցվածի/ առանձնահատկություններով: Նշված հորատանցքերը տեղադրված են տարածքի կենտրոնական մասում՝ երկու բարձրադիր գոտիների արանքում ընկած տաշտակաձև ձորականման գոգավոր իջվածքի /լուսանկար N 20/ հատակային մասում, որն ավելի վաղ եղել է էրոզիոն ձորակ, որով պարբերաբար հոսել են մակերևութային ջրեր, և որը ժամանակի ընթացքում լցվել է կավային նյութով, սակայն թաղված հունում շարունակվում են ներծծվող մակերևութային ջրերի կուտակումները, որոնք առաջացնում են ձորակի երկայնքի հատվածում սահմանափակ ջրատար հորիզոն, այսպես կոչված՝ վերնաջուր /верховодка/: Դրանք չեն լինում համատարած, հաճախ կրում են սեզոնային բնույթ:

Ուսումնասիրվող տարածքից ավելի բարձր նիշերի վրա կան առանձին աղբյուրների ելքեր, որոնցով պայմանավորված է տարածքի երկու կողմից՝ հարավից և հյուսիսից անցնող ձորակների առաջացումը: Լեռնային պայմաններում մերձմակերևութային /գրունտային/ ջրերի համատարած հորիզոն հիմնականում չի գոյանում, այդ ջրերն առաջացնում են ոչ կանոնավոր ստորգետնյա հոսքեր՝ թույլ, ուժեղ ճեղքավորված ապարների միջով, տեղ-տեղ դուրս գալով երկրի մակերևույթ աղբյուրների տեսքով, հաճախ կրում են ժամանակավոր /սեզոնային/ բնույթ:

Քարտեզ 6. Նախկին Ջրածոր համայնքի կադաստրային քարտեզ




Արդյունաբերական ապրանքների արտադրության օբյեկտներ չկան: Գյուղում չկան նույնիսկ մանրածախ առևտրի օբյեկտներ: 1967 թ. Գյուղի մոտ հայտնաբերվել է դիատոմիտի խոշոր հանքավայր[4]:

Գյուղի կառուցման համար նախնական հատկացված տարածքի հարևանությամբ (Քարտեզ 7) կան նաև քարի հանքավայրեր[4]:

Զբոսաշրջություն, մշակույթ, ավանդույթներ

Զբոսաշրջությունը զարգացած չէ և համայնքի զարգացման հեռանկարում կդիտարկվի որպես թիրախային կետ, քանի որ, այն համարվում է տնտեսության գերակա ճյուղերից: Զբոսաշրջային հետաքրքրություն կարող են ներկայացնել՝

Քարտեզ 7. Վերաբնակեցման տարածքի հարևանությամբ գտնվող հողատարածքները



ա) պատմության և մշակույթի հուշարձանները (աղյուսակ 1), որոնք ներառված են պետական ցուցակում,

բ) բնական լանդշաֆտը, որը նպաստում է ակտիվ հանգիստ կազմակերպելուն, արշավներ, լեռնային հեծանվավազք, դահուկավազք և այլն,

գ) Կապսի ջրամբարի կառուցումից հետո գյուղում և տարածաշրջանում կարող են զարգանալ նաև ջրային մարզաձևերը և ձկնորսությունը:

Աղյուսակ 2. Զրածորի պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ

ԱՄՐՈՏ	Ք.ա. 2-1 հազ.-Ք.հ. 3-4 դդ.	հս-ամ եզրին, բլրի վրա
ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 4-3 հազ.-Ք.հ. 3 դ.	ամրոցի շրջակայքում
ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 3 հազ.-Ք.հ. 2 դ.	0.5 կմ աե

ԵԿԵՂԵՑԻ	միջնադար վերակառ. 19 դ.	գյուղի մեջ
ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	19-20 դդ.	եկեղեցու շրջակայքում

Գյուղի դպրոցի մոտ բացվել են մթա 3-րդ հազարամյակի բնակավայրի հետքեր, գտնվել են մեծ քանակության շքեղ խեցեղենի բեկորներ, անոթներ, օջախի դեկորատիվ հարդարանքի մնացորդներ, ինչը, ի լրումն ամրոցի և դամբարանադաշտերի, խոսում է գյուղի հարուստ պատմական անցյալի մասին:

Գյուղի բնակչության թվականակի մասին առաջին տեղեկությունը մեզ է հասել 1831 թվականից, այդ ժամանակ գյուղն ունեցել է 206 բնակիչ: Բնակչության ամենամեծ թվաքանակն արձանագրվել է 1939 թվականին՝ 663 բնակիչ, այնուհետև դիտվել է բնակչության ատիճանական նվազում [5], և 2021թ. Հունվարի 1-ի դրությամբ բնակավայրն ունեցել է 240 բնակիչ [6]:

Ջարգացման հիմնական ուղղություններ

Ջրածորի բնակչության զբաղվածության հիմնական ուղղությունները շարունակելու են մնալ դաշտավարությունն ու անասնապահությունը, մասնավորապես, մսակաթնային անասնաբուծությունը, կաթի և կաթնամթերքի արտադրությունը [7]: Տարածաշրջանում զարգացման ներուժ ունի նաև մեղվաբուծությունը:

Այսուհանդերձ, Կապսի ջրամբարի կառուցումը լրացուցիչ ուղղություններ կստեղծի բնակավայրի զարգացման համար, մասնավորապես, կձևավորվեն նախադրյալներ՝

- Ջրային մարզաձևերի և հանգստի ենթակառուցվածքների,
- Զբոսաշրջության և դրա հետ անմիջականորեն առնչվող՝ հյուրանոցային կամ հյուրատնային բիզնեսի, տարբեր ծառայությունների և սպասարկումների օբյեկտների տեղաբաշխման համար:

4.7. Բնության հատուկ պահպանվող տարածքներ/ԲՀՊՏ-ներ/

Թեև ՀՀ Շիրակի մարզը չունի ԲՀՊՏ-ների հարուստ համակարգ, սակայն մարզում է գտնվում Հայաստանի 4 ազգային պարկերից 1-ը՝ «Արփի լիճ» ազգային պարկը, որն ունի կարևոր նշանակություն մարզի հյուսիսային հատվածի ջրային և ցամաքային կենսաբազմազանության պահպանության համար: «Արփի լիճ» ազգային պարկը հիմնադրվել է ՀՀ կառավարության 2009թ-ի ապրիլի 16-ի N 405-Ն որոշմամբ: Պարկը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Եղնախաղի լեռնաշղթայի արևելյան և Զավախքի լեռնաշղթայի հարավ-արևմտյան լանջերի ու դրանց միջև ընկած մարզագետնատափաստանային, մերձալպյան մարզագետնային և խոնավ տարածքների էկոհամակարգերի, այդ թվում՝ Արփի և Արդենիս լճերի ու Ախուրյան գետի վերին հոսանքի ծախսակողմյան վտակների


ավազանների, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության հուշարձանների և դրանց բաղադրիչների պահպանությունը, բնականոն զարգացումը, վերարտադրությունն ու կայուն օգտագործումն ապահովելու նպատակով: Ջրածորի նոր բնակավայրի համար ընտրված տարածքը տեղակայված է «Արփի լիճ» ազգային պարկի մոտակա սահմանից շուրջ 9,5 կմ հեռավորության վրա, բնակավայրը հետագայում իր ֆունկցիոնալ գործունեությամբ չի ունենալու որևէ կապ կամ կախվածություն պարկի հետ, հետևաբար նախատեսվող բնակավայրի հիմնադրմամբ «Արփի լիճ» ազգային պարկի վրա բացասական ազդեցություններ չեն ակնկալվում:


4.8. Մթնոլորտային օդի և հողերի նկարագրության ելակետային իրավիճակ

Նախատեսվող տարածքում չկան մթնոլորտային օդի և հողերի աղտոտվածության մոնիտորինգի ստատիկ դիտակետեր, հետևաբար ելակետային իրավիճակի նկարագրության համար օգտագործվում է մոտարկման մեթոդը և ստորև ներկայացվում է մթնոլորտային օդի և հողերի աղտոտվածության ելակետային իրավիճակը՝ ըստ Գյումրի քաղաքի տվյալների՝ օգտագործելով «Հիդոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքում հասանելի տեղեկատվությունը.


Մթնոլորտային օդ

Գյումրի քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է մեկ անշարժ դիտակայան և 24 շարժական դիտակետ: 2022 թվականի 2-րդ եռամսյակում Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան գերազանցել է համապատասխան ՍԹԿ-ն ապրիլ ամսին 1.9 անգամ, հունիսին՝ աննշան, իսկ մայիսին գտնվել է ՍԹԿ-ի սահմաններում: Ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:





Պատկեր 23. Չմաքսի քաղաքի մթնոլորտային օդում ծմաքսի կոնցենտրացիաների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները




Պատկեր 24. Չմաքսի քաղաքի մթնոլորտային օդում ազոտի կոնցենտրացիաների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները

Հողերի աղտոտվածություն

2021 թվականի հողային ծածկույթի ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներն իրականացվել են Լոռի, Վայոց ձոր, Սյունիք, Շիրակ և Արմավիր մարզերում, ինչպես նաև՝ Երևան քաղաքում: Ուսումնասիրությունների արդյունքների համաձայն Շիրակի մարզի ուսումնասիրված հողերում ՄԹԿ-ները գերազանցում են վանադիումի պարունակությունը 1.1-2.5 անգամ, քրոմինը՝ 1.7-54.0 անգամ, նիկելինը՝ 6.0-37.8 անգամ, պղնձինը՝ 7.7-24.3 անգամ, ցինկինը՝ 2.2-8.3 անգամ, արսենինը՝ 4.0-21.0 անգամ և կապարինը՝ 1.7 անգամ: Մարզի հողային ռեսուրսների աղտոտումը՝ ըստ առանձին մետաղների պատկերող քարտեզները ներկայացված են ստորև.

Շիրակի մարզի հողային ծածկույթում մետաղների կոնցենտրացիոն բաշխվածությունը 202 թվականին



5. ՀԻՄՆԱԴՐՈՒԹԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Համաձայն Պատվիրատուի տեխնիկական առաջադրանքի, Ջրածոր նոր բնակավայրը նախագծվելու է ներառականության և «Universal Design»-ի հիմնական սկզբունքներին համապատասխան. բոլոր հասարակական վայրերը և շենքերը, արտադրական շենք/շինությունները լինելու են բնակչության բոլոր շերտերի, այդ թվում՝ կանանց, երեխաների, տարեցների, հաշմանդամների համար անվտանգ և մատչելի, փողոցները և հասարակական վայրերն ապահովված են լինելու արտաքին լուսավորությամբ, այն բնակելի տները, որոնք տրամադրվելու են հաշմանդամ ունեցող ընտանիքներին (13 ընտանիք) պետք է նախագծվեն ՀՀՇՆ IV-11.07.01-2006. «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժ խմբերի համար» շինարարական նորմերի պահանջներին համապատասխան:

Տեխնիկական առաջադրանքով սահմանվել են նաև գյուղի առաջնահերթ կառուցապատման շրջանակները, ընդ որում՝

1) Ջրածոր նոր բնակավայրը նախագծվելու է 370 բնակչի հաշվարկով: Առաջին փուլով՝ նախատեսվելու է կառուցել 76 բնակելի տուն, հեռանկարում ևս 8-ը, ընդամենը՝ 84 տուն, յուրաքանչյուրը 800-1000 մ² տնամերձ հողամասով:

2) Նախատեսվելու է համայնքային բազմաֆունկցիոնալ կենտրոն/համալիր, որը կներառի՝

- վարչական սենյակներ, բուժ.կետ, անասնաբուժական կետ՝ առանձին մուտքերով,

- մշակույթի կենտրոն՝ 150 տեղանոց դահլիճով՝ կահավորված, բուժետ, արտադպրոցական պարապմունքների երկու սենյակ (համակարգչային և երաժշտական խմբակների համար),

- մանկապարտեզ, կիրառելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի «Նախադպրոցական կրթության այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելները և դրանց ներդրման կարգը հաստատելու մասին» հրամանի նախադպրոցական կրթական ծառայության մատուցման տարբերակ 2-ը,

- Դպրոց 35-40 աշակերտի համար: Դպրոցի տեսակը՝ տարրական կամ հիմնական, կճշտվի նախագծման երկրորդ փուլի ընթացքում:

3) Նախատեսվելու են գյուղամիջյան ճանապարհներ, ընդհանուր օգտագործման այլ տարածքներ, բաց մարզադաշտ, արտաքին լուսավորության ցանց,

Թվարկվածից զատ, նախատեսվելու են նաև կաթի հավաքման կետի կառուցում, Ջրածորն այլ բնակավայրերի հետ կապող ավտոճանապարհների ծրագծերը, կոմունալ ենթակառուցվածքները, այդ թվում՝ կոյուղու մաքրման կայան և աղբավայր (վերջինը՝ ըստ անհրաժեշտության):

Ջրածոր նոր բնակավայրի տարածական կազմակերպման համար մշակող անձնակազմի կողմից պատվիրատուի հայացողությանը ներկայացվեց երկու տարբերակ:

Ինչպես արդեն նշված է նոր բնակավայրի կառուցման համար համար Ամասիայի ավազանու կողմից նախնական հաստատումը ստացած Հողմաջուր գետի ձախափնյա մասում երկու հատվածից նախագծային աշխատանքների մշակողների կողմից նպատակահարմար գտնվեց Հ-32 հանրապետական ավտոմայրուն հարող և մինչև Գյումրի քաղաքի ջրատարը հասնող հատվածը, որի չափերը բավարարում են ՀՀՇՆ 30-01-2014-ի Աղյուսակ 2, կետ 5-ի պահանջին, առաջադրվող բնակչության թվին՝ 384 մարդու համար ոչ պակաս 15.36 հա:

Առաջին տարբերակի հատակագծային լուծումը հյուսիս-հարավ տարվող հիմնական փողոցի և դրան ուղահայաց երեք փողոցների դիրքով : Արտաքին ավտոմայրուղուց դեպի գյուղի հասարակական կենտրոն անցնող հյուսիս-արևմուտք ուղղությամբ փողոցը ուղղված է դեպի ապագա ջրամբարը: Հասարակական կենտրոնը և զբոսայգին պարփակված են գյուղի հիգ փողոցների միջև: Շրջապատող փողոցները նախատեսված են տնամերձ հողամասերով բնակելի կառուցապատման

համար: Ճանապարհային ցանցում նախատեսված են նաև ընտանի կենդանիների համար առանձնացված ճանապարհներ: Ընդհանուր առմամբ հատակագծային կառուցվածքը ունի կուր լուծում, տարածքի չափը կազմեց 12.37 հա, ինչն այս տարբերակի դրական կողմն է:

Բնակավայրը ունենելու է ռելիեֆի հետ համադրված հնարավորինս կանոնակարգված կառուցապատված մակերես: Փողոցների թեքությունները կազմում են մինչև 6% թեքություն, ինչը թույլատրվում է ՀՀ սահմանված նորմերով: Բնակավայրի դիրքը հնարավորություն է տալիս կառուցապատումը հիմնականում բացել դեպի Կապսի ջրամբարի ջրային մակերես, ինչը բնակավայրը գեղագիտական առումով դարձնելու է ավելի հաճելի և տարածաշրջանի համար յուրահատուկ: Տարածքը կազմում է **12.37** հա: Ըստ գործառական գոտիավորման տարածքում նախատեսված են հետևյալ գոտիները.

- *Սակավահարկ բնակելի տնամերձ կառուցապատման 7.10 հա,*
- *Հասարակական կառուցապատման 0.83 հա,*
- *Ընդհանուր օգտագործման /փողոցներ և հրապարակներ/ 3.08 հա,*
- *Ընդհանուր օգտագործման /զբոսայգի/ 0.68 հա*

Բնակավայրի կենտրոնական հատվածում տեղակայված է դպրոցի շենքը, որն իր մեջ ներառնում է նաև համայնքային ղեկավարի գրասենյակը, բուժական կետ, դահլիճ 150 հոգու համար և այլն:

Դպրոցի գոտու ձախ հատվածում՝ համեմատաբար բարձր նիշերի վրա տեղակայված է գոտի՝ որը հետագայում հնարավոր է կառուցապատել որևէ հասարակական, մեմորիալ կամ կրոնական բնույթի կառույցով: Տարածքում նախատեսվում է նաև առևտրի գոտի: Բնակավայրում նախատեսվում են գյուղամիջյան ճանապարհներ, ընդհանուր օգտագործման այլ տարածքներ, մարզադաշտ, արտաքին լուսավորության ցանց:

Բնակելի տների ծավալահատակագծային լուծումների համար հիմք են հանդիսացել դեռևս 2012թվ-ին ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից հաստատված բնակելի կառուցապատման օբյեկտների կատալոգի օրինակները, որոնք դասակարգվում են ըստ մակերեսների և հարկայնության, ինչպես նաև՝ կախված, մակերեսից, ըստ գործառական առանձնահատկությունների: Ջրածոր նոր բնակավայրը նախագծվել է ներկայիս 335 բնակչի և հեռանկարային /15 տարի/ զարգացման 10% աճով՝ 370 բնակչի հաշվարկով: Ընդունելով ընտանիքի կազմը միջինը 4,5 մարդ՝ առաջին փուլով՝ 76 տուն, հեռանկարում ևս 8, ընդամենը 84 տուն, յուրաքանչյուրը 800-1000 մ² տնամերձ հողամասով:

Բացի բնակելի տներից հողակտորների վրա նախատեսվում է տեղակայել նաև օժանդակ նշանակության սենքեր: Բոլոր տնամերձ հողամասերի թիկունքին կից նախատեսվում է 4 մ լայնությամբ օժանդակ ուղիներ, որոնք հնարավորություն են տալիս բնակավայրում ընթացող կենցաղային որոշ գործընթացներ իրականացնել ոչ հանրային տարածքներով:

Բնակելի տների մակերեսների հաշվարկը իրականացվել է խորհրդատու կազմակերպության կողմից իրականացված հարցումների, ինչպես նաև ընտանիքների կազմի հիման վրա: Նախագծմանը զուգընթաց իրականացվել է Ջրածոր բնակավայրի գրանցված ազդակիր անձանց քանակի, հաստատված նախագծերով բնակելի կառուցապատման օբյեկտների օրինակելի տների կատալոգից վերցված տների եվ հողամասի փաստացի ներքին ու նախագծվող մակերեսների: Վերջինիս արդյունքում յուրաքանչյուր ընտանիքի տան համար որոշվել է մոտավոր անհրաժեշտ բնակելի մակերեսի չափը, որը չի հակասում նորմատիվ պահանջներին: Վերոհիշյալ տեղետվությունը հաջորդ նախագծային փուլերում՝ վերջնական ճշտագրումից հետո կարող է հիմք հանդիսանալ առանձին տների նախագծման համար:

Երկրորդ տարբերակի հատակագծի հիմքում դրվեց տարածքի ռելիեֆի վերլուծությունը ըստ թեքությունների և կողմնադրությունների /տես Քարտեզ 3./ եզրահանգումը, որը նպատակաուղղված էր նվազագույնի հասցնելու նախատեսվող փողոցային ցանցի թեքությունները և դրանց կառուցման համար հողային աշխատանքի ծավալները: Տարբերակում հիմք ընդունելով ներառականության և «Universal Design»-ի հիմնական սկզբունքները. փողոցների երկայնական թեքությունները հիմնականում 5-7% և չեն գերազանցում 8%: Երկրորդ տարբերակի կազմում նախատեսված է բնակավայրի լրակազմությունը և հարմարավետությունը երաշխավորող գործառական գոտիները՝ տնամերձ կառուցապատմանը անհատական տների կառուցման համար, հասարակական կառուցապատման գոտիները Տեխնիկական առաջադրանքով սահմանված շենքեր-շինությունների կառուցման համար, ընդհանուր օգտագործման տարածքների մեջ ներառված փողոցները, հրապարակները և զբոսայգին: Տարբերակում հիմք ընդունելով ներառականության և «Universal Design»-ի հիմնական սկզբունքները. փողոցների երկայնական թեքությունները հիմնականում 5-7% և չեն գերազանցում 8%:




Բնակավայրի կառուցման տարածքի չափը կազմեց 14.3 հա:

Գծապատկեր 6. Զրաձոր գյուղի գլխավոր հափակագծի 1-ին տարբերակ

ՆՈՐ ՋՐԱՉՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ
ՏԱՐԲԵՐԱԿ 1 ԿՈՒՌԵՍՈՒՄՆԱՍՆ ՍՆԵՍԱ



Բնակավայրի տարածք
 Բնակելի ԿՈՒՌԵՍՈՒՄՆԱՍՆՈՒՄ - 7.37 հա
 ՀԱՏԱԿԱՎԱԿԱՆ ԿՈՒՌԵՍՈՒՄՆԱՍՆՈՒՄ - 0.25 հա
 ՃԱՆԱԿԱՎԱԿԱՆ ՑԱՆՑ - 1.67 հա
 ԶՈՒՄԱՑԳԻՆԵՐ, ԴՈՒՐԱԿԵՆԵՐ - 1.96 հա
 ԱՆԱՆԱՏԱՐ ՃԱՆԱԿԱՎԱԿԱՆՈՒՄ - 0.25 հա
 ԸՆԴԱՄԱՆԵՆ - 11.5 հա
 ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐ - 84




Գծապատկեր 7. Զրաձոր գյուղի գլխավոր հափակագծի 2-րդ տարբերակ

ՆՈՐ ՋՐԱՉՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ
ՏԱՐԲԵՐԱԿ 2



Բնակավայրի տարածք
 Բնակելի ԿՈՒՌԵՍՈՒՄՆԱՍՆՈՒՄ - 8.34 հա
 ՀԱՏԱԿԱՎԱԿԱՆ ԿՈՒՌԵՍՈՒՄՆԱՍՆՈՒՄ - 1.10 հա
 ՃԱՆԱԿԱՎԱԿԱՆ ՑԱՆՑ - 3.10 հա
 ԶՈՒՄԱՑԳԻՆԵՐ, ԴՈՒՐԱԿԵՆԵՐ - 1.54 հա
 ԱՆԱՆԱՏԱՐ ՃԱՆԱԿԱՎԱԿԱՆՈՒՄ - 0.32 հա
 ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐ - 84 հս



Այսուհանդերձ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ գյուղի վերաբնակեցման տարածքի համար կապալառուների կողմից առաջարկվել է նոր տարբերակ, ինչի շուրջ ծավալվել են լրացուցիչ քննարկումներ, որոնց արդյունքներով, ինչպես նաև Զրաձորի բնակիչների նախընտրությամբ պայմանավորված նախապես ընտրված տարածքը՝ Տարբերակ 1-ը, մնացել է անփոփոխ:

Պատվիրատուի ընտրությամբ ներկայացված երկու տարբերակներից Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի մասնագետների կարծիքով կիրառման համար առաջարկվեց առաջին տարբերակը, որը ներկայումս դրված է գլխավոր հատակագծի մշակումների հիմքում:

Ջրամատակարարում և ջրահեռացում /կոյուղի/

Նոր Ջրածորի ջրամատակարարումը իրագործելու համար ամենա նպատակահարմարը և տնտեսական տեսանկյունից հիմնավորված կարող է լինել նոր գյուղի կառուցման համար ընտրված տարածքի գեոդեզիական վերին նիշերով անցնող ջրագիծը:

Ստորև բերված 6.5 աղյուսակում ներկայացված են Ջրածորի նոր բնակավայրի բնակչության կենցաղային և հասարակական կազմակերպությունների համար հաշվարկային ջրապահանջը ու ջրահեռացման քանակը ըստ ջրամատակարարման նորմերի:

Աղյուսակ 6.5

N	Ջրասպառողներ	Ջրասպառողների Հաշվարկային թիվ, հազ. մարդ	Ջրասպարման նորմ, լ/օր	Ջրապահանջ		Ջրահեռացում	
				մ3/օր	լ/վրկ	մ3/օր	լ/վրկ
1	2	3	4	5	6	7	8
1	Բնակչության կոմունալ-կենցաղային	0.39	150	58.5	0.68	54	0.62
2	Արտադրական ձեռնարկ.	-	-	17.5	0.2	16	0.185
3	Հակահրդեհային կարիքներ	-	-	17.5	0.2	-	-
4	Ընդամենը	-	-	93.5	1.08	70	0.8
5	Հնարավոր կորուստ/<10%/	-	-	9.4	0.16	-	-
	Ջրածոր ամբողջը	-	-	103	1.24	64	0.73

6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՎԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

Նախատեսվող գործունեության իրականացուման համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմերին նախատեսվում է ապահովել, համաձայն բնապահպանական կառավարման պլանի (ԲԿՊ): ԲԿՊ պարունակում է նախատեսվող գործունեության բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն, շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, ինչպես նաև մոնիտորինգի գործողություններ՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին:

ԲԿՊ-ն, որը մշակվելու և ներառվելու է ռազմավարական գնահատման հաշվետվությունում, ինչպես նաև ընդգրկվելու է ծավալաթերթերում և որպես անբաժանելի բաղադրամաս կցվելու է հիմնական կապալառուի հետ մրցութային և պայմանագրային փաստաթղթերին:

ԲԿՊ-ն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի առանձին էկոհամակարգերի, բուսական և կենդանական աշխարհի, մարդու առողջության ու շինարարների անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունների նկարագրությունը, որոնք հնարավոր են ծրագրի իրականացման նախագծման, շինարարության և շահագործման փուլերում և դրանք կանխող, մեղմացնող միջոցառումների ցանկը:

Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ում ներառված միջոցառումների իրականացման համար և իր հերթին համապատասխան պայմանագրային պարտավորություններ է նախատեսելու ենթակապալառուի հետ իր պայմանագրերում:

ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Պատվիրատուի և հեղինակային և տեխնիկական հսկողություն իրականացնող մարմինների կողմից կիրականացվեն կանոնավոր մոնիտորինգ՝ համաձայն մշակվելիք և ռազմավարական գնահատման հաշվետվության մեջ ներառվելիք մոնիթորինգի պլանի, որի շրջանակներում բնապահպանության մասնագետի կողմից կիրականացվեն մոնիտորինգի դաշտային ստուգայցեր:

Տեխնիկական վերահսկողությունը պետք է իրականացնի ամենօրյա ռեժիմով, որը ներառելու է նաև բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության հարցերը: Տեխնիկական վերահսկողություն իրականացնող կազմակերպությունը պարտավոր է ժամանակին Պատվիրատուին և/կամ

նախագծային կազմակերպությանը տեղեկացնել նկատված անհամապատասխանությունների վերաբերյալ:

Ծախսերի արդյունավետության տեսանկյունից նպատակահարմար է համարվել փոշու, աղմուկի, ջրի որակի և թրթռումների մակարդակի պարամետրերի չափագրումներն իրականացնել այն դեպքերում, եթե ազդակիրների կողմից արձանագրվեն համապատասխան բնույթի գանգատներ:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կներդրվի բողոքների արձագանքման մեխանիզմ (ԲԱՄ), որը հիմնականում ուղղված կլինի արտաքին շահագրգիռ կողմերի և ազդակիր հասարակության կողմից իրականացվող գործունեության հետ կապված դժգոհությունների ստացմանը, գնահատմանն ու լուծմանը:

7. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ և ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմնադրությային փաստաթղթի վերաբերյալ 1-ին փուլի հանրային ծանուցումն ու քննարկումները տեղի են ունեցել 2022թ. Հուլիսի 21-ին, ժամը 14:00-ին՝ ՀՀ Շիրակի մարզի Ամասիա խոշորացված համայնքում, Ջրածոր բնակավայրի դպրոցի դահլիճում: 1-ին հանրային քննարկման հայտարարությունը, մասնակիցների ցանկը և արձանագրությունը ներկայացված են սույն ՆԳՀ-ի Հավելված 1-ում:

Հանրային քննարկումները կազմակերպվել են հանրային քննարկման և ծանուցումների իրականացման կարգի համաձայն, ըստ որի հանդիպումից նվազագույնը 7 աշխատանքային օր առաջ հանդիպման վերաբերյալ հայտարարությունը հրապարակվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2022թ-ի հուլիսի 9-ի համարում: Հանդիպման վերաբերյալ հայտարարությունը և ՆԳՀ-ը էլ-փոստի միջոցով ուղարկվել է նաև Ամասիայի համայնքապետարանին և հասանելի է եղել հանրության համար:

Հանրային քննարկման արդյունքներով Ամասիայի համայնքապետարանի կողմից տրամադրվել է «ՇՄԱԳ և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով սահմանված ՏԻՄ նախնական համաձայնության գրությունը, որը ներկայացված է սույն ՆԳՀ-ի Հավելված 2-ում:

Հանրային քննարկման տեսաձայնագրությունը ներկայացվում է սույն նախնական գնահատման հայտին կից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ

1. «ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Զրաձոր նոր բնակավայրի կառուցապատման համար անհրաժեշտ ծրագրային և նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթի պատրաստում» ծրագրի 1-ին փուլի հաշվետվություն
2. www.meteoblue.com կայք
3. Տարածքի 1:2000 մասշտաբի տեղագրական հանույթ
4. Ախուրյան գետի ջրային ռեսուրսների համապարփակ կառավարում (ԶՌՀԿ), Կապս ջրամբարի և ինքնահոս ոռոգման համակարգի կառուցում. Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման հիմնական հաշվետվության վերջնական տարբերակ.2020թ.
5. Ամասիա համայնքի 2017-2021 թվականների զարգացման հնգամյա ծրագիր,
6. Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան. «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ, 2008թ.
7. ՀՀ ազգային վիճակագրական կոմիտեի կայքէջ /ՀՀ Շիրակի մարզը թվերով/<https://armstat.am/file/doc/99527583.pdf>,
8. ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 22.03.2022թ. N°20-Ա որոշումը «ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Զրաձոր բնակավայրի պարզեցված գլխավոր հատակագծի մշակման նախագծային առաջադրանքը հաստատելու մասին»:

ՆԳՀ-Ի ՄՇԱԿՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ

- 1.«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.),
2. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.),
3. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.),
4. ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում,
5. ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում,
6. ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում,
7. ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա որոշում,
8. Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրքը (02.05.2001թ.),
9. ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի N 1396-Ն և ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N 1404-Ն որոշումները,
- 10.«Շինարարական կլիմայաբանություն ՀՀՇՆ II-7.01-2011»
(http://www.mud.am/lows/files/26_10_11_h.pdf) նորմատիվային
փաստաթուղթ:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. 1-ին հանրային քննարկման հայտարարությունը, մասնակիցների ցանկը և արձանագրությունը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՄԱԿԱՄԱՐԻՍՏՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎԻՏԵՏ

9.07.2022 ՇԱՐԱԹ թիվ 127 (7793)

«HAYASTANI HANRAPETUTIUN» ARMENIAN DAILY www.hypress.am E-mail: hh@hypress.am

Լույս է տեսնում 1990թ. հոկտեմբերի 9-ից



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՄԱԿԱՄԱՐԻՍՏՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎԻՏԵՏ

ԷԶ 7

9 ՀՈՒՆԻՍ 2022, ՇԱՐԱԹ

010 52-69-74

ԳՌՎԱԶԴ, ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

hhgovazd@mail.ru

09.06.2022թ. ժամը 12:00 -ին Արագածոտնի մարզի Ասարակի համայնապետությունից շնորհիվ կրկին սկսված է հոգևորականության արձանագրության կիրառումը...

Լոս 1. Ասարակի համայնքի Ասարակի հողային Ասարակի սեկցիայում գտնվող 02-001-0859-0595 ծածկագրով 0,1832 հա վարչական կատարվող հողատնտեսական օգտագործման համար հողատնտեսական օգտագործման համար հողատնտեսական օգտագործման համար հողատնտեսական օգտագործման համար...

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՄԱԿԱՄԱՐԻՍՏՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎԻՏԵՏ

«Երջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի/21.06.2014թ. 30-110-Ն/ համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 2022թ-ի հուլիսի 21-ին ժամը 14:00-ին ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի համայնապետությունում տեղի կունենան «ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի և Զրաձոր բնակավայրի կառուցողական համար անհրաժեշտ ծրագրային և նախագծման նախագծերի փաստաթղթերի փաթեթի դասադասում» ծրագրի ընթացքում միջավայրի վրա ազդեցության գնահատման գնահատման հայտի վերաբերյալ համայնքի և ԲՆԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (1-ին փուլի) համայնքի ծանուցում և փնտրումներ: Փաստաթղթերին կարելի է ծանոթանալ «Շահագործման և բնակարարության շահագործման համայնքի և Զրաձոր բնակավայրի կառուցողական համար անհրաժեշտ ծրագրային և նախագծման նախագծերի փաթեթի» կայքէջում, հասցեն՝ ՀՀ, 0009, Բ. Երևան, Տերյան 105, ինչպես նաև Ամասիայի համայնապետությունում, հասցեն՝ Շիրակի մարզ, Ամասիա համայնք:

Զրիսիկեն Լևոնի Գևորգյանի արարածից 2001 թ. ստացված քիշմանակ անվանակերտ

Հայաստանի Հանրապետության Հարկային Կոդեքսի 2-րդ գլուխի 7-րդ հոդվածի կիրառման մասին

Յուրահավատության շահագործման դեմ կիրառվող մեղադրանքի վերաբերյալ հարկային կոդեքսի 2-րդ գլխի 7-րդ հոդվածի կիրառման մասին 2022 թ. օգոստոսի 12 -ին ժամը 1100 -ին հայտարարում է գյուղատնտեսական նպատակային նախագծերի կիրառման մասին 2022 թ. օգոստոսի 12-ին ժամը 1100 -ին հայտարարում է գյուղատնտեսական նպատակային նախագծերի կիրառման մասին 2022 թ. օգոստոսի 12-ին ժամը 1100 -ին հայտարարում է գյուղատնտեսական նպատակային նախագծերի կիրառման մասին...

ՀՀ Գեղարևուճի մարզի, Ան 12:00-ի տեղի կունենան անուր:

ՀՀ Գեղարևուճի մարզի, Ան 12:00-ի տեղի կունենան անուր: ՀՀ Գեղարևուճի մարզի, Ան 12:00-ի տեղի կունենան անուր:

ՀՀ Գեղարևուճի մարզի, Ան 12:00-ի տեղի կունենան անուր: ՀՀ Գեղարևուճի մարզի, Ան 12:00-ի տեղի կունենան անուր:

ՀՀ Գեղարևուճի մարզի, Ան 12:00-ի տեղի կունենան անուր: ՀՀ Գեղարևուճի մարզի, Ան 12:00-ի տեղի կունենան անուր:

ՀՀ Գեղարևուճի մարզի, Ան 12:00-ի տեղի կունենան անուր: ՀՀ Գեղարևուճի մարզի, Ան 12:00-ի տեղի կունենան անուր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՄԱԿԱՄԱՐԻՍՏՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎԻՏԵՏ

ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնապետությունում «09» օգոստոսի 2022թ. ժամը 11:30-ին տեղի կունենան համայնքի և ԲՆԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ համայնքի կառուցողական համար հողատնտեսական օգտագործման համար հողատնտեսական օգտագործման համար հողատնտեսական օգտագործման համար...

Մասնակիցների ցանկ

2022թ-ի հուլիսի 21-ին ժամը 14:00-ին ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքում կայացած «ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Նոր Ջրածոր բնակավայրի կառուցապատման համար անհրաժեշտ ծրագրային և նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթի պատրաստում» ծրագրի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային ծանուցում և քննարկումներ (1-ին փուլի հանրային ծանուցում և քննարկումներ)

N	Անուն, ազգանուն	Կազմակերպություն/պաշտոն	Հեռախոսահամար	Ստորագրություն
1.	Վարդան Կարամյան	ՊՈՒՐ Բնակարանային շինարարական ընկերություն	091223690	<i>[Signature]</i>
2.	Գևորգ Գալստյան	ՉԼԿԿ Գրասենյակ	091399392	<i>[Signature]</i>
3.	Կոմիտասյան Գեորգի	ԳԼԵԿՍ Գրասենյակ	077338091	<i>[Signature]</i>
4.	Գևորգ Գրիգորյան	ԳԼԵԿՍ Գրասենյակ	077777625	<i>[Signature]</i>
5.	Վարդան Վահանյան	ԿՄԵԻ	099204210	<i>[Signature]</i>
6.	Գևորգ Գրիգորյան	ՀՏՑՀ	091319702	<i>[Signature]</i>
7.	Վան Բախյան	ՊՈՒՐ Բնակարանային ընկերություն	091586635	<i>[Signature]</i>
8.	Գևորգ Գալստյան	ՎՇԿԿ Գրասենյակ	091200292	<i>[Signature]</i>
9.	Գևորգ Գալստյան	ՀՏՑՀ ՕԻՍ	041111425	<i>[Signature]</i>
10.	Արթուր Արթուրյան	«Հայնախնայ»	091587871	<i>[Signature]</i>
11.	Արթուր Արթուրյան	Գ. Գրասենյակ	094696626	<i>[Signature]</i>
12.	Արսև Կարամյան	Բնակարանային ընկերություն	093741835	<i>[Signature]</i>
13.	Արսև Կարամյան	Բնակարանային ընկերություն	077743392	<i>[Signature]</i>
14.	Զրաբ Բերկանյան	Բնակարանային ընկերություն	094474954	<i>[Signature]</i>
15.	Զրաբ Բերկանյան	Բնակարանային ընկերություն	098281006	<i>[Signature]</i>
16.	Մուշեղյան Գրիգոր	Բնակարանային ընկերություն	077192353	<i>[Signature]</i>
17.	Սարգսյան Կոստյան	Բնակարանային ընկերություն	094001216	<i>[Signature]</i>
18.	Արմենյան Լյուդմիլա	Բնակարանային ընկերություն	098081140	<i>[Signature]</i>
19.	Լիանուսյան Շուշիկ	Բնակարանային ընկերություն		<i>[Signature]</i>
20.	Վանուկյան Կարինե	Բնակարանային ընկերություն	077.04.08.89	<i>[Signature]</i>

N	Անուն, ազգանուն	Կազմակերպություն/պաշտոն	Հեռախոսահամար	Ստորագրություն
21.	Վարդգեսյան Կարմիր	բնակիչ	098740231	ԿԵ
22.	Ինչոյան Վրան	բնակիչ	098272769	ՎԻ
23.	Փարսյան Մարգարիտ	բնակիչ	093777270	ՓՄ
24.	Գրիգորյան Գևորգ	բնակիչ	096512821	ԳԳ
25.	Վահանյան Զարուհի	ՀԾԸԱԿ ԲԲԿ	09120028	ՎՎ
26.				
27.				
28.				
29.				
30.				
31.				
32.				
33.				
34.				
35.				
36.				
37.				
38.				
39.				
40.				
41.				
42.				
43.				

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Նոր Ջրաձոր բնակավայրի կառուցապատման համար անհրաժեշտ ծրագրային և նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթի պատրաստում» ծրագրի վերաբերյալ 1-ին հանրային քննարկումների

2022թ-ի հուլիսի 21-ին, ժամը 14:00-ին ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի համայնքի Ջրաձոր բնակավայրո դպրոցի շենքում տեղի ունեցան «ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Նոր Ջրաձոր բնակավայրի կառուցապատման համար անհրաժեշտ ծրագրային և նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթի պատրաստում» ծրագրի վերաբերյալ 1-ին հանրային քննարկումները՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն: Հանրային քննարկումների հայտարարությունը հրապարակված է եղել <<Հայաստանի Հանրապետություն>> օրաթերթի 2022 թ-ի հուլիսի 9-ի թիվ 127 (7793) համարում:

Հանրային քննարկումները նախատեսված էին Ամասիայի համայնքապետարանի շենքում, սակայն բնակավայրի բնակիչների և համայնքի ղեկավարության առաջարկով տեղափոխվեցին անմիջապես ազդակիր բնակավայր՝ Ջրաձոր:

Հանդիպմանը մասնակցում էին Ամասիայի համայնքի ղեկավարը, Հայաստանի Տարածքային Ջարգացման Հիմնադրամի, փաստաթղթերի փաթեթը մշակող նախագծային կազմակերպությունների, նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի մշակման և հանրային լուսմների կազմակերպման պատասխանատու ընկերության (Ի Սի Ի Քաուքազու ՍՊԸ) ներկայացուցիչները, ինչպես նաև Ջրաձոր բնակավայրի վարչական ղեկավարը և բնակիչները: Մասնակիցների ցուցակը ստորագրություններով ներառված է Նախնական Գնահատման Հայտի փաթեթում:

Ամասիա համայնքի ղեկավար տիկին Ջենմա Հասրությունյանը ողջունեց ներկաներին և ներկայացրեց հանդիպման նպատակը: Այնուհետև խոսքը փոխանցեց նախագծող ընկերության ներկայացուցիչ Ջ. Մամյանին:

Ջ. Մամյանը ներկայացրեց նոր բնակավայրի նախագծի հիմնական ճարտարապետաշինարարական լուծումները, հատակագիծը և նախնական ուսումնասիրությունների արդյունքները: Այնուհետև խոսքը փոխանցվեց «Ի Սի Ի Քաուքազու» ՍՊԸ ներկայացուցիչ Վ. Թևոսյանին:

Վ. Թևոսյանը ողջունեց մասնակիցներին և ներկայացրեց գործունեության իրավական կարգավորման շրջանակները: Քննարկումը կազմակերպված է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջների

համաձայն: Ներկայացվող ծրագիրը հանդիսանում է հիմնադրության փաստաթուղթ և պետք է անցնի փորձաքննություն, օրենքով նախատեսված է իրականացնել ռազմավարական գնահատում, մշակել հաշվետվություն և կազմակերպել 4 հանրային քննարկում: Նշվեց նաև, որ հանրությունը և համայնքը պատշաճ կերպով ծանուցվել են: Այնուհետև Վ. Թևոսյանը ներկայացրեց նախատեսվող ծրագրի հիմնական բնապահպանական ռիսկերը և փորձաքննության հետագա ընթացքը: Հիմնական ռիսկերը կապված են հողաձաքի, առկա կենսաբազմազանության խախտման հետ:

Մասնակիցներին առաջարկվեց ներկայացնել իրենց հարցերն ու մտահոգությունները:

Հարց՝ բնակիչ Կ. Սողոմոնյան – ինչպես է լուծվելու նոր ճանապարհների խնդիրը, քանի որ առաջանալու է բնակիչների՝ դեպի Հողմիկ բնակավայր հողատարածքների կապի հետ ապահովման հարցը:

Ջ. Մամյանը ներկայացրեց նախագծով տրվելիք հիմնական լուծումները, այնուհետև ծավալվեց ընդհանուր քննարկում ճանապարհային լուծումների մասին:


Ընդհանուր քննարկումից հետո առաջարկվեց վերանայել բնակավայր ճանապարհային ցանցի լուծումները դեպի Հողմիկ:

Ամասիա համայնքի ղեկավար **Ջ. Հարությունյանը** առաջարկեց գլխավոր հատակագծում ներառել հետագա հնարավոր զարգացման տարածքները:

Քննարկման արդյունքում ներկայացված տեղեկատվությունը հավանության արժանացավ և առաջարկությունն արվեց վերը նշված նախագծին տալ նախնական համաձայնություն, գործընթացը ՀՀ օրենքով սահմանված կարգով շարունակելու վերաբերյալ:

Այլ հարցեր չհնչեցին և **Ջ. Հարությունյանը** փակեց նիստը:

Քննարկումների վարող և պատասխանատու՝

ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար  **Ջ. Հարությունյան**

Քննարկումների արձանգրող՝

«Ի Սի Ի Քառաբազուս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ  **Ս. Բաբայան**

Ձեռնարկողի ներկայացուցիչ՝

ՀԶԳՎԴ-ի իրականացման աշխ. խմբի ղեկ.  **Վ. Մելքոնյան**

Հավելված 2. Ամասիայի համայնքապետարանի նախնական համաձայնության գրությունը



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ, Շիրակի մարզի Ամասիա համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ամասիա, 26 փող. 19 շենք, Հեռ. (0246) 22925,
Էլ. փոստ՝ amasia.shirak@mta.gov.am

«Ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարան»
հիմնադրամի ռեկտոր
պարոն Ե. Վարդանյանին

N 0-25/411-2022
25 հուլիս 2022թ.

Հարգելի պարոն Վարդանյան,

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ և ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 2022թ-ի հուլիսի 21-ին ժամը 14:00-ին ՀՀ Շիրակի մարզի Ամասիա խոշորացված համայնքում (Ջրածոր բնակավայրի դպրոցի դահլիճում) տեղի են ունեցել «ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Նոր Ջրածոր բնակավայրի կառուցապատման համար անհրաժեշտ ծրագրային և նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթի պատրաստում» ծրագրի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 1-ին փուլի հանրային ծանուցում և քննարկումներ, որի ընթացքում նախագծի հեղինակների և այլ մասնագետների կողմից ներկայացվել և հանրային քննարկման մասնակիցների հետ քննարկվել է վերոհիշյալ ծրագիրը:

Ծրագրով ներկայացված նախնական նախագծային լուծումների, ցուցանիշների և քննարկման արդյունքների հիման վրա Ամասիայի համայնքապետարանը սույնով տալիս է իր նախնական համաձայնությունը «ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Նոր Ջրածոր բնակավայրի կառուցապատման համար անհրաժեշտ ծրագրային և նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթի պատրաստում» ծրագրին և ծրագրով նախատեսվող գործունեությանը:



Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված 3. «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի տեխնիկական առաջադրանքը

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ԶՐԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԵՎ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՏՍԱԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

1.	Նախագծման հիմքը	<ul style="list-style-type: none"> • 2014 թվականի դեկտեմբերի 19-ին Հայաստանի և Վերականգնման վարկերի բանկի (KfW) միջև կնքված վարկային համաձայնագիր • ՀՀ կառավարության 2020 օգոստոսի 27-ի հաստատված «Զրային ռեսուրսների համատեղված կառավարում/Ախուրյան գետ, փուլ 1» ծրագրի շրջանակներում Հողերի ձեռքբերման և վերաբնակեցման գործողությունների պլանը հաստատելու մասին» N 1411- Լ որոշում: • 2019 թվականի փետրվարի 22-ի «ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Զրաձոր բնակավայրի վերաբնակեցման համար առաջարկվող հողամասի հատկացման նախնական համաձայնություն տալու մասին» ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու N9-Ա որոշում:
2.	Նախագծման փուլերը	<p>I – Նոր Զրաձոր բնակավայրի համար հատկացված տարածքի ուսումնասիրություն, ելակետային նյութերի հավաքագրում, տարածքի համալիր գնահատական, Նոր Զրաձոր բնակավայրի կառուցապատման հայեցակարգի և հատակագծման սխեմայի մշակում,</p> <p>II – Նոր Զրաձոր բնակավայրի տարածական պլանավորման փաստաթղթերի՝ գլխավոր հատակագծի, գոտևորման նախագծի և քաղաքաշինական կանոնադրության մշակում, փորձաքննություն: Նախագծերի համաձայնեցման և հաստատման գործընթաց,</p> <p>III – Նոր Զրաձոր բնակավայրի հաստատված տարածական պլանավորման փաստաթղթերի պահանջներին համապատասխան բնակավայրի հատակագծային կազմակերպման ուրվագծի մշակում, նոր ճանապարհների, կամուրջի, բնակավայրի փողոցների, ավտոկայանատեղերի, հրապարակների, մարզադաշտի, զբոսայգիների, խաղահրապարակների, մայրուղային ինժեներական գծերի, ինժեներական կետային օբյեկտների /ըստ անհրաժեշտության՝ օրվա կարգավորման ջրամբար /ՕԿՁ/, կոյուղու մաքրման կայան /ԿԼԿ/, տրանսֆորմատորային ենթակայան /ՏԵԿ/, գազի բաշխիչ կայան /ԳԲԿ/, աղբավայր և այլն /, արտաքին լուսավորության աշխատանքային նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում,</p> <p>IV - Նոր Զրաձոր բնակավայրի հասարակական և արտադրական օբյեկտների, բնակելի տների և տնտեսական շինությունների աշխատանքային նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում:</p>

<p>3. Իրավիճակի նկարագիրը</p>	<ul style="list-style-type: none"> ▪ Կապսի պատվարի շինարարական աշխատանքները դադարեցվել են 1994 թվականին: Այնուամենայնիվ, «Ջրային ռեսուրսների համատեղված կառավարում/Ախտորյան գետ» ծրագիրն ավարտին հասցնելու նախագծման և կառուցման աշխատանքները վերսկսվել են ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ջրային կոմիտեի կողմից: Ծրագրով ընդլայնվելու և վերագինվելու է Ախտորյան գետի առկա ոռոգման համակարգը: ▪ Ծրագրի ընդհանուր նպատակն է խթանել Շիրակի մարզում Ախտորյան գետի սահմանափակ ջրային ռեսուրսների կայուն օգտագործումը՝ հաշվի առնելով մրցակցային պայմաններում տարբեր ջրօգտագործողների շահերը: Ծրագիրը նպատակ ունի բարձրացնել գյուղատնտեսական արտադրողականությունը, նպաստել սննդի անվտանգությանը, խթանել գյուղական շրջանների զարգացումը և բարելավել բնակչության կենսապայմանները, ինչպես նաև նվազեցնել թիրախային խմբի խոցելիությունը կլիմայի փոփոխության նկատմամբ, պահպանելով այդ շրջանի էկոհամակարգը և կենսաբազմազանությունը, ինչպես նաև նվազեցնելով բնակչության անվտանգության ռիսկերը անավարտ Կապսի պատվարի և ջրամբարի հոսքի ուղղությամբ իրականացվող շինարարության պայմաններում: ▪ 2017 թ.-ին ծրագրի իրականացման Խորհրդատուն կատարել է այն տարածքի թեքության կայունության ուսումնասիրություն, որտեղ տեղակայված է Ջրածոր համայնքը: Ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ պատվարի կառուցման երկու փուլերում էլ բնակատեղու անվտանգությունը կխախտվի, ինչպես նաև կիեղեղվի դրա մոտեցման ճանապարհը: Ավելի կոնկրետ, ուսումնասիրությունից ակնհայտ է դարձել, որ նույնիսկ առանց պատվարի և ջրամբարի կառուցման, Ջրածորի որոշ հատվածներ երկրաշարժի ընթացքում կարող են սահել դեպի ծորը՝ աշխարհագրական անբարենպաստ պայմաններից ելնելով: Այս եզրահանգմանն են եկել նաև 1980-ականներին իրականացված ուսումնասիրությունները: Հետևաբար, հիմք ընդունելով գնահատման արդյունքները, <u>առաջարկվել է տեղափոխել Ջրածոր գյուղը:</u> ▪ 2019 թվականի փետրվարի 22-ին ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանին ընդունել է «ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ջրածոր բնակավայրի վերաբնակեցման համար առաջարկվող հողամասի հատկացման նախնական համաձայնություն տալու մասին» թիվ 9-Ա որոշումը: ▪ 2020 թվականի օգոստոսի 27-ին ՀՀ կառավարությունը ընդունել է ««Ջրային ռեսուրսների համատեղված կառավարում/Ախտորյան գետ, փուլ 1» ծրագրի շրջանակներում Հողերի ձեռքբերման և վերաբնակեցման գործողությունների պլան (գործողությունների պլան) հատատելու մասին» թիվ 1411-Լ որոշումը: ▪ Ծրագրից ամենաշատը տուժելու է <u>Ջրածոր համայնքը (315 հողակտոր՝ 865,280.1 մ² մակերես տարածքով):</u> Ծրագրով <u>ազդեցության են ենթարկվելու նաև թվով 251 շենք/շինություններ:</u> Թվով 38 հողակտոր օգտագործվում է մշակաբույսերի աճեցման համար, որոնցից 29-ում աճեցվում է սխտոր, իսկ 9-ում՝ իշառվույտ: ▪ <u>Ջրածոր գյուղի վարչական տարածքում գտնվող վերաբնակեցման տեղանքը (ռեստորանին հարակից տարածքը)</u> Հողերի ձեռքբերման և վերաբնակեցման գործողությունների պլանով (ՀՁՎԳՊ) համարվում է ֆիզիկական վերաբնակեցման համար հնարավոր տարածք և վերաբնակեցման տարբերակի հաշվարկները կատարված են այդ ենթադրությունով: Այս տեղանքն առաջարկվել է
-------------------------------	--

		<p>Ջրածորի վարչական ղեկավարի կողմից հանրային լուսամտերի ընթացքում /տես՝ Պատկեր 1/:</p> <ul style="list-style-type: none"> 32 հա մակերեսով տեղանքը (*) աշխարհագրական տեսակետից գտնվում է լավ դիրքում, քանի որ այն մոտ է ճանապարհին և ջրագծին: Հողերի Ձեռքբերման և Վերաբնակեցման Գործողությունների Պլանի /ՀՀՎԳՊ/ մշակման փուլում Ամասիա համայնքի ավագանին տվել է նախնական համաձայնությունը նշված վայրում հողհատկացման վերաբերյալ /տես՝ Պատկեր 2/, ինչպես նաև ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (ՔՇԿ) հայտնել է, որ տեղանքը կարող է դիտարկվել, որպես վերաբնակեցման տեղանք /տես՝ Պատկեր 3/: <p>(*) Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու նախնական համաձայնության որոշման հիման վրա տրամադրված է 32 հա մակերեսով տեղանք: Վեջնական ճշգրտումները կիրականցվեն երկրաբանական հետազոտություններից հետո:</p>
<p>4. Կատարման ենթակա աշխատանքների համառոտ բնութագիրը</p>		<p>Նպատակը՝ Կապսի ջրամբարի վերակառուցման հետևանքով անբարենպաստ տարածքում հայտնվող Ջրածոր գյուղի վերաբնակեցման համար հատկացված տարածքում Նոր Ջրածոր բնակավայրի տարածական պլանավորման և կառուցապատման, այդ թվում՝ ճանապարհա-փողոցային ցանցի, կամուրջի, ինժեներական համակարգերի, հասարակական և արտադրական շենքերի, բնակելի տների և տնտեսական շինությունների աշխատանքային նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում:</p> <p>Նոր Ջրածոր բնակավայրը նախագծվելու է ներկայիս 335 բնակչի և հեռանկարային /15 տարի/ զարգացման 10% աճով՝ 370 բնակչի հաշվարկով: Ընդունելով ընտանիքի կազմը միջինը 4,5 մարդ՝ առաջին փուլով՝ 74 տուն, հեռանկարում ևս 8, ընդամենը 82 տուն, յուրաքանչյուրը 800-1000 մ² տնամերձ հողամասով:</p> <p><u>Առաջնահերթ կառուցվելու են.</u></p> <p>Գյուղի վերաբնակեցման վայրում՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ Ներկայումս Ջրածոր բնակավայրում փաստացի բնակվող 74 ընտանիքների տներ և տնտեսական շինություններ, ➤ Համայնքային կենտրոն/համակիր, որը կներառի՝ <ul style="list-style-type: none"> - վարչական սենյակներ, բուժ.կետ, անասնաբուժական կետ՝ առանձին մուտքերով, - մշակույթի կենտրոն՝ 150 տեղ դահլիճով՝ կահավորված, բուժետ, արտադպրոցական պարապմունքների երկու սենյակ (համակարգչային և երաժշտական խմբակների համար) - մանկապարտեզ, կիրառելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի «Նախադպրոցական կրթության այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելները և դրանց ներդրման կարգը հաստատելու մասին» հրամանի նախադպրոցական կրթական ծառայության մատուցման տարբերակ 2-ը (*), - Դպրոց 35-40 աշակերտի համար: Դպրոցի տեսակը՝ տարրական կամ հիմնական, կճշտվի նախագծման երկրորդ փուլի ընթացքում:

		<p>(*) Ամասիայի համայնքապետարանը պատրաստակամ նախադպրոցական կրթական ծառայության մատուցման համար հատկացնել միջոցներ:</p> <ul style="list-style-type: none"> ➤ Գյուղամիջյան ճանապարհներ, ընդհանուր օգտագործման այլ տարածքներ, բաց մարզադաշտ, արտաքին լուսավորության ցանց, ➤ Կաթի հավաքման կետի շենք, <p><i>Բնակավայրերը կապող ճանապարհներ՝</i></p> <ul style="list-style-type: none"> ➤ Ճանապարհ (Կապու-Վերաբնակեցման տեղանք), ➤ Ճանապարհ (Վերաբնակեցման տեղանք – Կամուրջ + Կամուրջից դեպի Զրաձոր Հողմիկ ճանապարհ), ➤ Կամուրջ: <p><i>Կոմունալ ենթակառուցվածքներ՝</i></p> <ul style="list-style-type: none"> ➤ Տրանսֆորմատորային ենթակայաններ /նախնական 3 հատ՝ 100 կՎԱ, նախագծողը կարող է հիմնավորել այլ քանակության և հզորության անհրաժեշտությունը/, ➤ 10 կՎ օդային գիծ (ՕԳ), ➤ 10կՎ ՕԳ տեղափոխություն (Վիվասել-ՄՏՍ և <<Աշոցք>> ՍՊԸ): (Վիվասել ՄՏՍ-ի բջջային կայանի և «Աշոցք» ՍՊԸ-ին պատկանող հանրային սննդի օբյեկտի էլեկտրասնուցումը կարող է ապահովվել նոր գյուղի ենթակայանից: Այս դեպքում անհրաժեշտ կլինի ապամոնտաժել առկա 1.6 կմ երկարությամբ 10կՎ ՕԳ-ն և կառուցել մոտավորապես 0.5 կմ երկարությամբ նոր ՕԳ, որը կմիացնի նշված օբյեկտները գյուղի ենթակայանին), ➤ Զրամատակարարման համակարգ՝ մայրուղային ջրագծեր, օրվա կարգավորման ջրամբար /ՕԿՋ/, ըստ անհրաժեշտության՝ պոմպակայան և այլն, ➤ Զրահեռացման համակարգ և կոյուղու մաքրման կայան /ԿՄԿ/, ➤ Աղբավայր, եթե ուսումնասիրությունների արդյունքում հիմնավորվի դրա անհրաժեշտությունը: <p><i>Նոր Զրաձոր բնակավայրը նախագծվելու է ներառականության և «Universal Design»-ի հիմնական սկզբունքներին համապատասխան. բոլոր հասարակական վայրերը և շենքերը, արտադրական շենք/շինությունները լինելու են բնակչության բոլոր շերտերի, այդ թվում՝ կանանց, երեխաների, փոքրիկների, հաշմանդամների համար անվտանգ և մատչելի, փողոցները և հասարակական վայրերն ապահովված են լինելու արտաքին լուսավորությամբ, այն բնակելի տները, որոնք պրամադրվելու են հաշմանդամ ունեցող ընտանիքներին (13 ընտանիք) կնախագծվեն ՀՀՇՆ IV-11.07.01-2006. «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժ խմբերի համար» շինարարական նորմերի պահանջներին համապատասխան:</i></p> <p><i>Նախագծային լուծումները պետք է ապահովեն շրջակա միջավայրի պահպանությունն, բնակչության անվտանգությունը,</i></p>
--	--	--

սոցիալական, առողջապահական և ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված այլ իրավունքները:

Լ փուլ. Նոր Ջրածոր բնակավայրի համար հատկացված տարածքի ուսումնասիրություն, ելակետային նյութերի հավաքագրում, տարածքի համալիր գնահատական, Նոր Ջրածոր բնակավայրի կառուցապատման հայեցակարգի և հատակագծման սխեմայի մշակում:

1) Տարածքի ուսումնասիրությունը, մասնավորապես, ներառում է՝

- Ջրածորի վերաբնակեցման համար հատկացված տարածքի սահմաններում ռելիեֆի, բնակլիմայական պայմանների, քամիների գերակշռող ուղղության և ուժգնության, հողատեսքերի, հողի ծածկույթի, շրջակա միջավայրի վիճակի, գոյություն ունեցող բուսականության, մասնավորապես՝ ծառերի, դրանց խմբերի ուսումնասիրություն և նկարագրություն,
- Ջրածոր գյուղի տնտեսության ճյուղերի, գյուղատնտեսության, արտադրության, զբոսաշրջության, մշակույթի, ազգային ավանդույթների զարգացման ներուժի վերլուծություն, զարգացման հիմնական ուղղությունների որոշում,
- Նոր բնակավայրի տարածքի սահմաններից դուրս գտնվող ինժեներական գծերի, օբյեկտների, մշակվող գյուղատնտեսական հողերի նկարագրություն, նոր բնակավայրի սահմաններից դրանց հեռավորության գնահատում,
- ջրագծի, ջրի աղբուրների, ջրի պաշարների ուսումնասիրություն, նկարագրություն:

(*) հիմնավորել լուսանկարներով, փեղեկանքներով, նորմափիվային փաստաթղթերով, փվյալների պաշտոնական կայքերի համապատասխան էջերի վրա հղումներով:

2) Ելակետային նյութերի հավաքագրումը ներառում է՝

- Ջրածոր բնակավայրի ընթացիկ տարվա դրությամբ կադաստրային քարտեզի /Մ1:10000/, հողային հաշվեկշռի հաշվետվության /22 ձև/ և տեղագրական հանույթի ձեռքբերում՝ ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեից,
- Նոր Ջրածոր բնակավայրի համար հատկացված տարածքի սեյսմամիկրոշրջանացման քարտեզի կազմում և ՀՀ սահմանած կարգով հաստատում, Մ1:10000 կամ Մ1:5000,
- Նոր Ջրածոր բնակավայրի համար հատկացված տարածքի համար ինժեներատեխնիկական շրջանացման քարտեզի կազմում, Մ1:10000 կամ Մ1:5000, ինժեներատեխնիկական հետազննման նյութեր, ինչպես նաև դրանց վերաբերյալ փորձաքննության եզրակացություն,
- Նոր Ջրածոր բնակավայրի համար հատկացված տարածքի սահմաններում տեղագրական հանույթի կազմում, առնվազն Մ1:1000 :

		<p>3) <u>Տեղեկանքներ համապատասխան իրավասու մարմիններից և կազմակերպություններից՝</u></p> <ul style="list-style-type: none"> ➤ Նոր Ջրածոր բնակավայրի համար հատկացված տարածքում պատմամշակութային, բնության հուշարձանների, օգտակար հանածոների հանքավայրերի առկայության/ բացակայության մասին, նոր բնակավայրի համար աղբյուրներից վերցվող /եթե անհրաժեշտ է/ ջրի օգտագործման թույլտվության վերաբերյալ, ➤ Նոր բնակավայրը գոյություն ունեցող ջրագծին միանալու տեխնիկական պայմանների մասին /գծի հզորությունը, միացման կետը, հեռավորությունը բնակավայրից, մայրուղային գծի նախնական ուղին/, ➤ Նոր բնակավայրը գոյություն ունեցող էլեկտրամատակարարման գծին միանալու տեխնիկական պայմանների մասին /գծի հզորությունը, միացման կետը, հեռավորությունը բնակավայրից, մայրուղային գծի նախնական ծրագիծը, ենթակայանների կառուցման անհրաժեշտությունը, տեղադիրքը, բնակավայրի ներսում ստորգետնյա մալուխային գծերի անցկացման հնարավորությունը, նպատակահարմարությունը/, ➤ Նոր բնակավայրը գոյություն ունեցող գազամատակարարման համակարգին միանալու տեխնիկական պայմանների մասին /գծի հզորությունը, միացման կետը, հեռավորությունը բնակավայրից, մայրուղային գծի նախնական ծրագիծը, գազի բաշխիչ կայանների կառուցման անհրաժեշտությունը, բնակավայրի ներսում ստորգետնյա խողովակաշարերով գծերի անցկացման հնարավորությունը, նպատակահարմարությունը/, ➤ Կոյուղու մաքրման կայանի /ԿՄԿ/ համար տեղի և ԿՄԿ-ում մաքրվող ջրերի հեռացման վայրի որոշում, ➤ Նոր Ջրածոր բնակավայրի աղբահանության համակարգի վերաբերյալ /հեռավորությունը մինչև գոյություն ունեցող աղբավայր, հավաքման և տեղափոխման եղանակը և պարբերականությունը/, ➤ Հակահրդեհային և բժշկական շտապ օգնության կայանների տեղադիրքի և նոր բնակավայրից դրանց հեռավորության մասին, ➤ Տարածքի ուսումնասիրության և հավաքագրված ելակետային նյութերի վերլուծություն, տարածքի համալիր գնահատական, ՀՀ կառավարության 29.12.2011թ. N1920-Ն որոշման պահանջներին համապատասխան <u>Ջրածոր բնակավայրի հենակետային հատակագծի և Նոր բնակավայրի տարածքին վերաբերող՝ ռիսկերի և սահմանափակումների քարտեզի կազմում,</u> ➤ Բացատրական տեքստային մաս՝ տարածքի փաստացի իրավիճակի նկարագրություն, վերլուծություն և համալիր գնահատում:
--	--	--

		<p>4) <u>Նոր Զրաձոր բնակավայրի կառուցապատման հայեցակարգը և հատակագծման սխեման /Մ1:5000 կամ 1:2000/ ներառում են.</u></p> <ul style="list-style-type: none"> ➤ Նոր Զրաձոր բնակավայրի առաջարկվող հատակագծային կառուցվածքը, ճանապարհների և գյուղամիջյան փողոցների ցանցը, բնակավայրի հասարակական կենտրոնի և բնակիչների հանգստի համար նախատեսված կանաչ տարածքների կազմավորումը, գործառական կապերը/функциональные связи/, ➤ Հիմնական և օժանդակ գոտիները, տեղադիրքը, մակերեսները, ➤ Ինժեներական ցանցերի նախնական սխեմաները, կետային օբյեկտների տեղադիրքը, պահպանական, անվտանգության և այլն գոտիները, գոյություն ունեցող ցանցերին միացնող գծերի ուղիները, ➤ Առաջարկվող լուծումների հիմնավորումը, բնակավայրի կառուցապատման և հետագա զարգացման հայեցակարգը: <p><i>Առաջին փուլի ընթացքում կապալառու նախագծային կազմակերպությունը, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան կազմում և Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ է ներկայացնում հայտը՝ «ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Նոր Զրաձոր բնակավայրի կառուցապատման համար անհրաժեշտ ծրագրային և նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթի կազմում» ծրագրի ռազմավարական գնահատման և փորձաքննության գործընթացի մեկնարկի համար:</i></p> <p><i>Առաջին փուլով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվում պայմանագիրը սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո 100-րդ օրացուցային օրը:</i></p> <p><i>Առաջին փուլով նախատեսված գրաֆիկական և տեքստային նյութերը՝ Կապալառու նախագծային կազմակերպությունը Պարվիրատուին է հանձնում՝ առաջին փուլի կատարման ժամկետից 10 օրացուցային օր շուրջ: Նշված 10 օրվա ընթացքում Պարվիրատուն ուսումնասիրում է ներկայացված աշխատանքը, աշխատանքը դրական գնահատելու դեպքում՝ սահմանված կարգով ընդունում այն, իսկ թերությունների հայտնաբերման դեպքում՝ համապատասխան հիմնավորումներով վերադարձնում է լրամշակման:</i></p> <p><i>Առաջին փուլի արդյունքներով հնարավոր է տեխնիկական առաջադրանքի ճշգրտում, առանց ֆինանսավորման պայմանների և նախատեսված աշխատանքների ընդհանուր ծավալի փոփոխության:</i></p> <p>II փուլ. Նոր Զրաձոր բնակավայրի տարածական պլանավորման փաստաթղթերի՝ գլխավոր հատակագծի, գոտևորման նախագծի և</p>
--	--	--

		<p>քաղաքաշինական կանոնադրության մշակում, փորձաքննություն: Նախագծերի համաձայնեցման և հաստատման գործընթաց</p> <p>1) <u>Նոր Ջրածոր բնակավայրի տարածական պլանավորման փաստաթղթերի՝ գլխավոր հատակագծի, գոտևորման նախագծի և քաղաքաշինական կանոնադրության մշակում՝</u></p> <ul style="list-style-type: none"> ➤ Նոր Ջրածոր բնակավայրի գլխավոր հատակագիծը՝ ՀՀ կառավարության 29.12.2011թ. N1920-Ն որոշմամբ հաստատված կազմով, ➤ Նոր Ջրածոր համայնքի գոտևորման նախագիծը և քաղաքաշինական կանոնադրությունը՝ ՀՀ կառավարության 14.05.2001թ. N 408 որոշմամբ սահմանված կազմով: <p><i>Նախագծային փաստաթղթերը Պատվիրատուին ներկայացնելու ժամկետ է սահմանվում առաջին փուլի ավարտին հաջորդող օրվանից հաշված՝ 90 օրացուցային օր:</i></p> <p><i>Նախագծային փաստաթղթերը Պատվիրատուին են ներկայացվում / Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դրական եզրակացությունների հետ միասին:</i></p> <p>2) <u>Նոր Ջրածոր բնակավայրի գլխավոր հատակագծի, գոտևորման նախագծի և քաղաքաշինական կանոնադրության փաստաթղթերի փաթեթի փորձաքննության, համաձայնեցման և հաստատման գործընթաց</u></p> <ul style="list-style-type: none"> - Պատվիրատուն, ներկայացված փաստաթղթերի փաթեթը, ուսումնասիրում է և դիտողություններ չունենալու դեպքում ներկայացնում է քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության: Դիտողություններ ունենալու դեպքում, վերադարձնում է լրամշակման: - Կապալառուն, հաշվի առնելով Փորձաքննության դիտողությունները և առաջարկությունները, կատարում է անհրաժեշտ ուղղումները և լրամշակումները և լրամշակված նախագիծը ներկայացնում Պատվիրատուին: - Պատվիրատուն, նախագծի վերաբերյալ փորձաքննության դրական եզրակացություն ստանալուց հետո, 3-օրյա ժամկետում նախագծային փաստաթղթերի փաթեթը ՀՀ օրենսդրությամբ նախատեսված փորձաքննությունների դրական եզրակացություններով ➤ ներկայացնում է ՀՀ քաղաքաշինության կոմիտե՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով համաձայնեցման և հաստատման գործընթացն իրականացնելու համար: Կապալառու նախագծող կազմակերպությունը ըստ անհրաժեշտության՝ մասնակցում է նախագծերի քննարկումներին, պատրաստում է զեկույցներ /պրեզենտացիաներ/, ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա լրամշակում նախագծերը և լրամշակված փաթեթը ներկայացնում Պատվիրատուին,
--	--	--

		<p>➤ Պատվիրատուն, ստանալով ՀՀ քաղաքաշինության կոմիտեից միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը և դրա հիման վրա Ամասիայի համայնքի ավագանու կողմից Նոր Ջրածոր բնակավայրի տարածական պլանավորման փաստաթղթերը հաստատելու մասին որոշումը, տեղեկացնում է Կապալառու նախագծային կազմակերպությանը II փուլի աշխատանքն ընդունելու մասին:</p> <p><i>Երկրորդ փուլի կատարման ժամկետ է սահմանվում առաջին փուլի ավարտին հաջորդող օրվանից հաշված՝ 180-րդ օրացուցային օրը:</i></p> <p><i>(*) Պատվիրատուն նախագծային փաստաթղթերը ուսումնասիրում է 15 օրացուցային օրվա ընթացքում, կրկնակի ներկայացված փաթեթը՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում: Կապալառու նախագծային կազմակերպությունը՝ սրացված դիտողությունների հիման վրա նախագծերը լրամշակում է 15 օրացուցային օրվա ընթացքում, կրկնակի դիտողություններ ստանալու դեպքում՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում:</i></p> <p>III փուլ. Նոր Ջրածոր բնակավայրի հաստատված տարածական պլանավորման փաստաթղթերի պահանջներին համապատասխան բնակավայրի հատակագծային կազմակերպման ուրվագծի մշակում, նոր ճանապարհների, կամուրջի, բնակավայրի փողոցների, մայթերի, ավտոկայանատեղերի, հրապարակների, մարզադաշտի, զբոսայգիների, խաղահրապարակների, մայրուղային ինժեներական գծերի, ինժեներական և կոմունալ օբյեկտների /ըստ անհրաժեշտության՝ ՕԿՋ, ԿՄԿ, ՏԵԿ, ԳԲԿ, աղբավայր և այլն/, արտաքին լուսավորության աշխատանքային նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակում:</p> <p>1) <u>Նոր Ջրածոր բնակավայրի հատակագծային կազմակերպման ուրվագիծ.</u> հետևյալ կազմով՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ Նոր Ջրածոր բնակավայրի հատակագծային կազմակերպման ուրվագիծ (կամ կառուցապատման գլխավոր հատակագիծ), Մ1:1000 կամ 1:500, որը իր մեջ ներառում է՝ տեղագրական հանույթի հիմքի վրա նախատեսվող բոլոր կառույցները, իրենց հողամասերի սահմաններով, մոտեցումներով և ճանապարհներով, նախագծվող օբյեկտների տեղագիրքը կոորդինատներով, քաղաքաշինական, բնապահպանական և այլ սահմանափակումները, հատակագծման, բարեկարգման, կանաչապատման լուծումները, շինարարական աշխատանքների փուլերը /կառուցապատման առաջնահերթությունները, հերթականությունը, նախնական ժամանակացույցը/, <ul style="list-style-type: none"> ➤ Ողղաձիգ հատակագծման նախագիծ, ➤ Հողային զանգվածների քարտեզագիր, ➤ Տրանսպորտային հաղորդակցուղիների անցկացման ուղիներ, ➤ Ինժեներատեխնիկական ցանցերի ամփոփ ուրվագիծ՝ ցանցերի միացման կետերով: ➤ Բնակավայրերը միացնող ճանապարհների, կամուրջի, բնակավայրի փողոցների, մայթերի, ավտոկայանատեղերի,
--	--	--

		<p>հրապարակների, մարզադաշտի, զբոսայգիների, խաղահրապարակների կառուցման և բարեկարգման աշխատանքային նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում, մասնավորապես՝</p> <p>2) <u>Բնակավայրերը կապող ճանապարհներ՝</u></p> <ul style="list-style-type: none"> ➤ Ճանապարհ (Կապու-Վերքնակեցման տեղանք), ➤ Ճանապարհ (Վերաբնակեցման տեղանք – Կամուրջ + Կամուրջից դեպի Ջրածոր Հողմիկ ճանապարհ), ➤ Կամուրջ (*): <p><u>(*) Պատվիրատուն Կապալառու նախագծային կազմակերպությանը կտրամադրի կառուցվող կամուրջի վերաբերյալ իր ուսումնասիրություն-ատաճարկությունը.</u></p> <p>3) <u>Բնակավայրի ընդհանուր օգտագործման տարածքներ՝</u></p> <ul style="list-style-type: none"> ➤ Բնակավայրի փողոցներ, ավտոկայանատեղեր, մայթեր, ➤ Հրապարակներ, մարզադաշտ, զբոսայգիներ, խաղահրապարակներ, ➤ Կանաչ տարածքներ, կանաչապատման սխեմա, ➤ Բարեկարգման տարրեր՝ փոքր ճարտարապետական ձևեր, կահավորանք՝ նստարաններ, աղբամաններ, ցուցանակներ և այլն: <p>4) <u>Մայրուղային ինժեներական գծերի, ինժեներական և կոմունալ օբյեկտների /ըստ անհրաժեշտության՝ ՕԿԶ, ԿՄԿ, ՏԵԿ, ԳԲԿ, աղբավայր և այլն/, արտաքին լուսավորության աշխատանքային նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում, մասնավորապես՝</u></p> <ul style="list-style-type: none"> - Տրանսֆորմատորային ենթակայանների կառուցում /հզորությունը և քանակը, ըստ տեխնիկական պայմանների/, - 10 կՎ օդային գծի (ՕԳ) կառուցում, - 10կՎ ՕԳ տեղափոխություն (Վիվասել-ՄՏՍ և <<Աշոցք>> ՄՊԸ) <p>(*):</p> <p><i>(*) Վիվասել ՄՏՍ-ի բջջային կայանի և «Աշոցք» ՄՊԸ-ին պատկանող հանրային սննդի օբյեկտի էլեկտրասնուցումը կարող է ապահովվել նոր գյուղի ենթակայանից: Այս դեպքում անհրաժեշտ է կլինի ապամոնտաժել առկա 1.6 կմ երկարությամբ 10կՎ ՕԳ-ն և կառուցել մոտավորապես 0.5 կմ երկարությամբ նոր ՕԳ, որը կմիացնի նշված օբյեկտները գյուղի ենթակայանին:</i></p> <ul style="list-style-type: none"> - Ջրամատակարարման համակարգ՝ մայրուղային ջրագծեր, օրվա կարգավորման ջրամբար /ՕԿԶ/, պոմպակայան և այլն, ըստ անհրաժեշտության, - Ջրահեռացման համակարգ և կոյուղու մաքրման կայան /ԿՄԿ/, - Արտաքին լուսավորության նախագիծ, այդ թվում լուսատու սարքեր և սարքավորումներ: <p><i>Երրորդ փուլով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվում երկրորդ փուլի ավարտին հաջորդող օրվանից հաշված՝ 180-րդ օրացուցային օրը:</i></p>
--	--	---

		<p>Նախագծային փաստաթղթերը Պարվիրատուին են ներկայացվում բնապահպանական ծործաքննության դրական եզրակացությամբ /օրենքով նախատեսված դեպքերում/, շահագրգիռ կազմակերպությունների հետ համաձայնեցումների, ինչպես նաև անհրաժեշտ ինժեներատեխնիկական ուսումնասիրությունների նյութերի և հաշվետվության հետ միասին:</p> <p>2-4 կետերում նշված օբյեկտների նախագծային փաստաթղթերը կազմվում են ըստ առանձին օբյեկտների և պարտադիր ներառում են աշխատանքների ծավալաթերթերը, նախահաշիվները, ինչպես նաև շինարարական աշխատանքների կազմակերպման նախագծերը, ապահովելով ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.01.2008թ. N11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 1-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:</p> <p>Երրորդ փուլով նախատեսված գրաֆիկական և տեքստային նյութերը՝ Կապալառու նախագծային կազմակերպությունը Պարվիրատուին է հանձնում՝ երրորդ փուլի կատարման ժամկետից 15 օրացուցային օր շուրջ: Նշված 15 օրվա ընթացքում Պարվիրատուն ուսումնասիրում է ներկայացված աշխատանքը, աշխատանքը դրական գնահատելու դեպքում՝ Պարվիրատուն ներկայացնում է նախագծային փաստաթղթերի փաթեթը քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության:</p> <p>Փորձաքննության դրական եզրակացություն ստանալուց հետո, սահմանված կարգով ընդունում է աշխատանքը, իսկ թերությունների հայտնաբերման դեպքում՝ համապատասխան հիմնավորումներով վերադարձնում է Կապալառուին՝ լրամշակման:</p> <p>IV փուլ. Նոր Զրաձոր բնակավայրի հասարակական, քաղաքացիական պաշտպանության, արտադրական օբյեկտների, բնակելի տների և տնտեսական շինությունների աշխատանքային նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում:</p> <p>1) <u>Նոր Զրաձոր բնակավայրի հասարակական նշանակության շենքերի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում</u></p> <ul style="list-style-type: none"> ➤ Համայնքային կենտրոն/համալիր, որը կներառի՝ <ul style="list-style-type: none"> - վարչական սենյակներ, բուժ.կետ, անասնաբուժական կետ՝ առանձին մուտքերով, - մշակույթի կենտրոն՝ 150 տեղ դահլիճով՝ կահավորված, բուժետ, արտադպրոցական պարապմունքների երկու սենյակ (համակարգչային և երաժշտական խմբակների համար) - մանկապարտեզ, կիրառելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի «Նախադպրոցական կրթության այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելները և դրանց ներդրման կարգը հաստատելու մասին» հրամանի նախադպրոցական կրթական ծառայության մատուցման տարբերակ 2-ը
--	--	--


		<p>- Դպրոց 35-40 աշակերտի համար: Դպրոցի տեսակը՝ տարրական կամ հիմնական, կճշտվի նախագծման երկրորդ փուլի ընթացքում: Անհրաժեշտ է մշակել և պատվիրատուի համաձայնեցմանը ներկայացնել դպրոցի էսքիզային նախագծի առնվազն երկու տարբերակ՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ համատեղված համայնքային կենտրոնի շենքի հետ ✓ առանձին կառույց, իր տարածքով <p>➤ Առևտրի և սպասարկման օբյեկտներ (*),</p> <p>➤ Քաղաքացիական պաշտպանության օբյեկտ /ապաստարան/:</p> <p>(* <i>ցանկը անհրաժեշտ է ճշտել ներկայումս Ջրածոր գյուղում առկա և հատուցման ենթակա օբյեկտների հետ:</i></p> <p><i>Համայնքային կենտրոնի համալիրով և հասարակական այլ շենքերով ձևավորել նաև գյուղի հասարակական կենտրոնը:</i></p> <p>2) <u>Արտադրական նշանակության շենքերի և շինությունների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում՝</u></p> <ul style="list-style-type: none"> ➤ Կաթի հավաքման կետի շենք, ➤ Գյուղատնտեսական արտադրության օբյեկտներ /անասնագոմեր, ջերմոցներ, արտադրամասեր/(*): <p>(* <i>ցանկը և չափերը անհրաժեշտ է ճշտել ներկայումս Ջրածոր գյուղում առկա և հատուցման ենթակա օբյեկտների հետ:</i></p> <p>3) <u>Բնակելի տների և տնտեսական շինությունների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում՝</u></p> <ul style="list-style-type: none"> ➤ Ներկայումս Ջրածոր բնակավայրում փաստացի բնակվող 74 ընտանիքների բնակելի տների և տնտեսական շինությունների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում (*): <p>(* <i>Կապալառու նախագծային կազմակերպությունը Պատվիրատուի համաձայնեցմանն է ներկայացնում բնակելի տների և տնտեսական շինությունների տեղակայման համար իր կողմից ընտրված նախագծերը: Առաջարկվող նախագծերը պետք է լինեն մի քանի տիպի /2,3,4 և այլ սենյականոց, 1 կամ 2 հարկանի, էներգախնայող, արևային ջրատաքացուցիչների նախատեսմամբ, տարբերակներ նաև հաշմանդամների համար լիովին հարմարեցված նախագծային լուծումներով: Տների և տնտեսական շինությունների արտաքին տեսքը համայնքի հաստատված կանոնադրության դրույթներին համապատասխան, պահպանելով արտաքին լուծումների ներդաշնակ բազմազանությունը:</i></p> <p><i>Ընտրությունը կարելի է կատարել օգտվելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից մշակված և սահմանված կարգով հաստատված բազմակի օգտագործման նախագծերի կադրերը, Կապալառու նախագծային կազմակերպության կողմից մինչ այդ մշակված նախագծերը, այլ նախագծեր, դրանց հեղինակների համաձայնությամբ:</i></p> <p><i>Հասարակական և արտադրական շենքերը, բնակելի տները նախագծել պահպանելով էներգախնայողության և էներգաարդյունավետության պահանջները:</i></p> <p><i>Տեղակայման համար ընտրված նախագծերը, բոլոր շենքերի ճարտարապետահարակազմային լուծումները /հարակազիծ, ճակարներ, եռաչափ պատկերը ընդհանուր միջավայրում՝ հարևան օբյեկտների հետ միասին/ նախապես համաձայնեցվում են</i></p>
--	--	--

		<p>Պատվիրատուի հետ, որից հետո միայն մշակվում են դրանց աշխատանքային փաստաթղթերը: Յուրաքանչյուր օբյեկտի նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմվում է առանձին արժույթի տեսքով:</p> <p>Նախագծային փաստաթղթերը Պատվիրատուին են ներկայացվում բնապահպանական ծորձաքննության դրական եզրակացությամբ /օրենքով նախատեսված դեպքերում/ ,, շահագրգիռ կազմակերպությունների հետ համաձայնեցումների, ինչպես նաև անհրաժեշտ ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների նյութերի և հաշվետվության հետ միասին:</p> <p>Բոլոր օբյեկտների նախագծային փաստաթղթերը կազմվում են ըստ առանձին օբյեկտների և պարտադիր ներառում են ջրամատակարարման, ջրահեռացման, էլեկտրամատակարարման ներքին ցանցերը, բոլոր աշխատանքների ծավալաթերթերը, նախահաշիվները, ինչպես նաև շինարարական աշխատանքների կազմակերպման նախագծերը, ապահովելով ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.01.2008թ. N11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ Ի-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:</p> <p>Չորրորդ փուլով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվում՝ երրորդ փուլի ավարտին հաջորդող օրվանից հաշված՝ 150-րդ օրացուցային օրը:</p> <p>Կախալառու նախագծային կազմակերպությունը՝ նախագծային փաստաթղթերը ներկայացվում են Պատվիրատուին չորրորդ փուլի համար սահմանված ժամկետի ավարտից առնվազն 20 օր շուրջ: Նշված 20 օրվա ընթացքում Պատվիրատուն ուսումնասիրում է ներկայացված փաստաթղթերը և դրական գնահատելու դեպքում՝ Պատվիրատուն ներկայացնում է նախագծային փաստաթղթերի փաթեթը քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության:</p> <p>Փորձաքննության դրական եզրակացություն ստանալուց հետո, սահմանված կարգով ընդունում է աշխատանքը, իսկ թերությունների հայտնաբերման դեպքում՝ համապատասխան հիմնավորումներով վերադարձնում է Կապալառուին՝ լրամշակման:</p>
5.	Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ	<p>Փաստաթուղթը մշակվելու է ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝</p> <ul style="list-style-type: none"> - ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգի» պահանջները, - ՀՀ կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշմամբ հաստատված «Բնակավայրերի տարածքների գոտևորման

		<p>Նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգի» պահանջները,</p> <ul style="list-style-type: none"> - ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները, - ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N128-Ն հրամանոր հաստատված՝ Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բավանդակությունը սահմանող կանոնների պահանջները, - Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենքի պահանջները, - ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգի» պահանջները, - Փաստաթղթերը կատարող կազմակերպության կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում ներկայացվում են ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացը մեկնարկելու և իրականացնելու համար, - Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման համար անհրաժեշտ ելակետային նյութերի հավաքագրումն, նախագծային փաստաթղթերի վերաբերյալ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության եզրակացությունների ստացումն, ինչպես նաև շահագրգիռ կազմակերպությունների հետ համաձայնեցումների ստացումն իրականացնելու է նախագծային փաստաթղթեր մշակող կազմակերպությունը /բացառությամբ գլխավոր հատակագծի և գոտևորման նախագծի ու քաղաքաշինական կանոնադրության շահագրգիռ մարմինների հետ համաձայնեցման գործընթացի/, - Կապալառուն մասնակցում է հանրային քննարկումներին և շահագրգիռ մարմինների հետ համաձայնեցման օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերին, քննարկումներին, պատրաստում է ցուցադրական նյութեր և զեկույցներ. - Կապալառուն 15 օրյա պարբերականությամբ Պատվիրատուին տեղեկատվություն է ներկայացնում կատարված աշխատանքների վերաբերյալ, իսկ Պատվիրատուի պահանջով նաև ներկայացնում է ընթացիկ նյութերը քննարկման:
6.	Նախագծի կազմը	<p>Նախագծային փաստաթղթերը ներկայացվում են՝</p> <ul style="list-style-type: none"> - Տեխնիկական առաջադրանքին, ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես՝ - ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգի», - ՀՀ կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշմամբ հաստատված «Բնակավայրերի տարածքների

		<p>գոտնորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգի»,</p> <ul style="list-style-type: none"> - ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N 128-Ն հրամանով հաստատված Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնների պահանջներին համապատասխան: <p>Նախագծային փաստաթղթերը Պատվիրատուին են հանձնվում թղթային և էլեկտրոնային տարբերակներով.</p> <ul style="list-style-type: none"> - Թղթային տարբերակը՝ գծագրերը տպած մշակման մասշտաբով, ալբոմները հավաքած A4 կամ A3 չափի թղթապանակներում /գծագրերը ծալած շտամպերը ներքևի աջ անկյունում, - էլեկտրոնային տարբերակը՝ գծագրերը բնօրինակ գծագրական ծրագրով՝ AutoCAD (կամ ArchiCAD) և PDF ձևաչափով, տեքստը՝ Microsoft Office Word, Armenian Unicode ձևաչափով: <p>Հաստատված նախագծային փաստաթղթերը Պատվիրատուին են ներկայացվում 5-ական օրինակով՝ թղթային և էլեկտրոնային կրիչներով:</p> <p>Ընթացիկ նյութերը Պատվիրատուի քննարկմանը ներկայացվում են էլեկտրոնային կամ թղթային տարբերակով:</p> <p>Յուրաքանչյուր փուլի ավարտված փաստաթղթերը ներկայացվում են Պատվիրատուին 1 թղթային և էլեկտրոնային տարբերակներով:</p> <p>Փորձաքննության ներկայացվող նյութերը տպագրվում են Կապալառուի կողմից առանձին և Պատվիրատուին ներկայացվող նյութերում հաշվառված չեն:</p>
	Այլ պայմաններ և պահանջներ	<p>II փուլի ավարտից հետո Պատվիրատուն 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառու կազմակերպությանը կտրամադրի III փուլով նախատեսվող օբյեկտների մշակման նախագծային առաջադրանքները, իսկ III փուլի ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ IV փուլով նախատեսված օբյեկտների նախագծային առաջադրանքները:</p> <p>Առանձին օբյեկտների նախագծման թույլտվության /ճարտարապետահատակագծային առաջադրանքի/ ստացումը ապահովում է Պատվիրատուն:</p> <p>Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված Նախագծային կապալառու կազմակերպությունը նախագծման ընթացքում համագործակցում է ՀԶՎԳ-ի իրականացման խորհրդատուի հետ, իսկ համագործակցության արդյունքում նախագծային առաջադրանքի ճշգրտման անհրաժեշտության դեպքում՝ համատեղ՝ Պատվիրատուի հետ:</p>

Պատկեր 1



Պատկեր 2



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ն Գ-Ա

«22» փետրվարի 2019 թվական

գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ
ՋՐԱԶՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ
ՀԱՏԿԱՅՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթով և հաշվի առնելով Ջրաձոր գյուղի բնակիչների ու վարչական ղեկավարի ցանկությունը և առաջարկությունը, ինչպես նաև Ծրագրի Իրականացման խորհրդատուի (Ջրամբարի նախագծող) նախնական զնահատման արդյունքները, և Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակը տված նախնական համաձայնությանը, որ գյուղի վերաբնակեցնելու տարբերակը հաշվարկվի կից ներկայացվող տեղագրական քարտեզում նշված տեղամասի համար՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանին՝

որոշում է

Տալ նախնական համաձայնություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ջրաձոր բնակավայրի վերաբնակեցման համար առաջարկվող հողամասի հատկացմանը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝**

Կողմ՝ 9 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

ԱՐՏԵՄ ԴԱՎԹՅԱՆ՝

ՍԵՐՈԲ ՂՈՒԿԱՍՅԱՆ՝

ԱՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԿ ՆԻԿՈԼՅԱՆ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ՝

ԱՆԴՐԱՆԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ՝

ԱԼԵՔՍԱՆ ՔՈՂՈՅԱՆ՝

ԱՐՄԱՆ ՄԻՐԶՈՅԱՆ՝

ԿԱՐԱՊԵՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ՝

Handwritten signatures and initials in blue ink on a set of horizontal dashed lines.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՆԱՏ



Handwritten signature in blue ink.

ԶԵՄԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«22» փետրվարի 2019 թվական
գյուղ Ամասիա



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

«Ի Էյ Էներջի Ըղվայգորի»
սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերության ծրագրերի ղեկավար՝
պարոն Գարիկ ԱՐԱՐՅԱՆԻՆ

2019 թվականի փետրվարի 14-ի
N EA-1914 գրություն

Հարգելի պարոն Արաբյան

ՀՀ քաղաքաշինության կոմիտեում ուսումնասիրվել են Կապսի ջրամբարի կառուցման հետ կապված Ամասիա համայնքի Ջրածոր գյուղի վերաբնակեցման հարցը:

Ըստ մեր նախնական ուսումնասիրության քարտեզում նշված հողատարածքը կարող է դիտարկվել որպես Ջրածոր գյուղի վերաբնակեցման տարածք, այն ունի համեմատաբար հարթ ռելիեֆ, բացակայում են սանիտարապաշտպանիչ գոտիներ պահանջող օբյեկտներ և այլ բնույթի սահմանափակումներ (անհրաժեշտ է նաև նշված հատվածում պատմամշակութային հուշարձանների բացակայության վերաբերյալ ՀՀ մշակույթի նախարարության տեղեկանքը): Միաժամանակ, բնակավայր հիմնելուց առաջ, կառուցապատման համար բարենպաստ տարածքներ ընտրելու համար (կամ անբարենպաստը բացառելու) անհրաժեշտ է կատարել տարածքի ինժեներաերկրաբանական ուսումնասիրություն, ինչպես նաև ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն.Նախագծման նորմեր» շինարարական նորմերի պահանջներին համապատասխան հաշվարկել գրունտների հորիզոնական առավելագույն սպասվող արագացումները (g):

Գյուղական բնակավայրի տիպարային նախագծեր տրամադրելու վերաբերյալ հայտնում ենք, որ տիպարային նախագծեր, որպես այդպիսին չկան, սակայն մեր կողմից ընտրվել են կանոնավոր հատակագծում ունեցող երկու գյուղական բնակավայր, որոնց կադաստրային քարտեզները pdf և dwg ձևաչափերով տրամադրում ենք: Հայտնում ենք նաև մեր պատրաստակամությունը կոմիտեի լիազորությունների շրջանակներում աջակցելու իրականացվելիք աշխատանքներին:

Առդիր՝ 6 ֆայլ և 1 էլեկտրոնային կրիչ:

X


Հարգանքով՝

Անահիտ ՀԱԽՈՒՄՅԱՆ



Ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն՝
Տիգրան Մանուկյան, հեռախոս՝ 011 621 725

»:

Կամրջի ուսումնասիրություն և առաջարկություն



Կամրջի դիրքը քարտեզի վրա.



Կամուրջի համառոտ նկարագրություն

Գերնացման համար նախատեսված կառույցը իրենից ներկայացնում է երկկողմանի երթևեկության և հեղիորնային անցման համար նախատեսված, առնվազն 12 մետր երկարություն ունեցող, միաթռիչք, 7 մետր լայնությամբ կամուրջ:

Տեղադիրքը տես՝ Պատկեր 4-ում

Այն որպես անցուղի պետք է միացնի գետի երկու ափերով անցնող 10-15 փարի շարունակ չօգտագործվող դաշտամիջյան երկու ճանապարհ, ապահովելով նոր գյուղի և գյուղ նշանակության

հողափարածքների հետ կապը: Աշխարհագրական դիրքով գտնվում է հետևյալ կոորդինատային կետերով շրջափակվող փարածքում:

N	Latitude/Լայնական	Longitude/Երկայնական
1	40°54'44.61"N	43°47'13.12"E
2	40°54'45.02"N	43°47'15.19"E
3	40°54'43.50"N	43°47'16.13"E
4	40°54'43.22"N	43°47'13.69"E

Կոնստրուկտիվ առումով կամուրջի հիմքերը, կրող հենարանային պատերը և դրանց վրա հավաքված կրող հեծանները կիրականացվեն միաձույլ երկաթբետոնով: Երթևեկելի մասը կծածկվի թեթև բետոնե սալերով, որոնց վրա կիրականացվեն հարթեցման և ասվալտապատման աշխատանքներ:

Կամուրջի եզրերին կիրականացվի մետաղական անվտանգության բազրիքներ, իսկ մայթից երթևեկության ճանապարհ սահմանագիծը կանջատվի պողպատե արգելափակոցով:

Հավելված 4. Նոր Ջրածոր բնակավայրի կառուցապատման համար նախատեսվող տարածքի տեղադիրքը՝ WGS-84 (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով

Ներառված է սույն ՆԳՀ-ի փաթեթում՝ որպես Հավելված 4, առանձին խտանիշքով: